

Յ Ե Յ Ե Ր

Վ Է Պ

ՊԵՐՃ ՊԻՕՇԵԱՆՑԻ

(Շարունակութիւն 1)

ԺԱ.

ԷԶՄԻԱԾՆԻ ՈՒԽՏԱԻՈՐԸ.

Արարատեան նահանգի ամեն մի գիւղացու աչքին սովորական է յաճախ տեսնել եկեղեցումը՝ դրան առաջին կանգնած՝ մի մի օտարական ժամաւորի, որոնք կուրծքը կոծելով՝ անդադար ծունր են դնում և առանց աջ ու ձախ նայելու՝ Յիսուսի ներկայացրած մաքսաւորի նման գլուխը խոնարհեցրած՝ միմիայն տեսնում են իւրեանց բամբակի թելից գործած տրեխները:

Ամեն մի երեխայ, ամեն մի սուր աչք գիտեն, թէ ո՞վ է ջերմ աղօթականը, ո՞ր աշխարհբիցն է և ո՞ր է եկել:

— Ե՛լի եկել են, արմնկով հրում են և ցոյց են տալիս ժամաւորներն իրար և քթերիցը զայրալիւր յուսահատական ծուխ արձակելով լռում:

Ժամն արդէն դուրս է եկել. ժամաւորները Աւետարանը համբուրել են, տուել են ժամկոչին «ողորմի Աստուածը» և լսել նրա մեքենայաբար «ողորմի ծնողացդ» պատասխանը. տէրտէրներն արդէն ծալել են իւրեանց փիլոնը և կախել կանանց դասի վանդակից ու իւրեանք դուրս եկել՝ ժամից, խառնուել դրսւը ժողոված ժամաւորներին: Ժամհարը հանգցրեց վերջին ճրագը և մօտե-

1) Տե՛ս «Մօլորձ»-ի 1 և 2 համալրները:

ցաւ օտարականին. բայց նորեկը ոչինչ չի տեսնում, նա մտքով սլացած է հրեշտակների դասը, նա վերացած է անցաւոր աշխարհից: Երկու անգամ ժամհարը զգուշութեամբ շարժել է աղօթականին, բայց նա չի շտապում, նրա շրթունքները մրմնջում են «եկեցէն»:

— Տէրտէրն ինձ սպասում է, տիրացո՛ւ, պաշտումահաց ունինք, կրկնում է ժամկոչը. բայց օտարականը կարծես անտարբեր է դէպի այդ առաջարկը: Նա մի երկու ծունր ևս կրկնում է և երկիւղածութեամբ ուղղում է քայլերը դէպի բեմը, ամեն մի խաչ, մէն մի պատկեր կարգով համբուրում է, ամեն սիւնի անկիւնին երեք անգամ մօտեցնում է շրթունքը և ամեն մի համբուրին երեք անգամ խաչակնքում երեսը:

Վերջապէս Աստուծոյ մարդը եկեղեցու արտաքին շեմքից առաւ իւր փափագը և գլխիկոր՝ հաշուած ու համեստ քայլերով գրնում է յառաջ, շարունակելով Խաղաղականի «Հաւատով խոստովանիմք»:

— Ողորմի Աստուած, տիրացո՛ւ, խանգարում է մեր ճգնաւորին տէրտէրը եկեղեցու բակումը:

Պանդուխտը հանդարտօրէն գլուխը վեր բարձրացրեց, յառաջեց դէպի ձայնը և մի անխելի շշուկով արտասանած «օրհնեա տէր» խօսքի հետ՝ անխածական համբոյր դրոշմեց տէր հօր սուրբ աջին և ամենահամեստ ու ամօթխած նորահարսին պատշաճ խոնարհութեամբ երկրպագութիւն տուեց շուրջ բոլորած ժողովրդին:

Նոքա ժամաւորներն էին, նոցանից ոչ մինը չէր հեռացել եկեղեցու բակից, ամենքը սպասում էին այս ներկայացմանը:

— Բարի գալ՛ւստդ, տիրացու եղբայ՛ր. Վանեցի՞ ես:

— Այո՛, սուրբ հայր:

— Հայրիկի աշակերտներիցը կը լինի՛ք:

— Մառա՛յ եմ:

— Ի՞նչպէս է Հայրիկը:

— Օրհնող է:

— Հիմա ո՞ւր է:

— Վանէն նուաստութիւնս ճանապարհ դրաւ ու ինքը Վարադ գնաց, հոն դպրոցին հանդէսը կը դիտէր:

— Ո՞ր կողմն է Աստուած ձեզ առաջնորդում, ո՞ւր էք գնում:

— Սուրբ Եջմիածնի ուխտաւոր ենք:

— Խնդրուած քիչ կատարուին:

Պատասխանը՝ խոնարհ երկրպագութիւն:

— Ո՞ր տեղ էք իջնանել:

— Բաց երկնից տակ, բայց սիրելի, հարազատ և հիւրասէր հայ հարց և եղբարց հովանիին ներքոյ:

— Լաւ ձայն ունի՞ք, լաւ երգել գիտե՞ք:

— Որչափ սուրբ Հոգին անարժանս օժտեր է:

— Եջմիածին զնացի՞ք:

— Ո՛չ, Կարսէն Աղուանեան սրբազանին յանձնարարականով Աղէքսանդրապոլի յաջորդ Յուսիկ հայր սուրբին ուղղուեցայ, ան ալ զիս այս կողմէն ճանապարհ դրաւ քանի մը Աշտարակեցի եղբարց, ուղեկցութեամբ:

— Ուրեմն ձիով էք եկել:

— Իմ ոտքերս ամուր են, անբան անասունը նեղելու հարկ չը կար. Հայրիկ մեզի յաճախ ոտքով քալելու և շարքաշութեան տոկալու վարժութիւններ կ'աւանդէր, ինքն ալ մեզի հետ Վանայ շրջակայքը կը պտըտէր, գիւղերը մեզի քարոզութիւն ընել կ'ուտար:

— Հայրիկն աշակերտներ շա՛տ ունի, տիրացու աղպէ՛ր, խօսակցութեան մէջ խառնուեց մի գիւղացի:

— Մէկ կողմէն կը յաւելին, միւս կողմէն կը պակասին, զպրօցն աւարտողներուս կը փոխարինեն նորեկներ:

— Դուք ե՞րբ էք աւարտել:

— Երկու տարի կայ: Հայրիկին պատուիրանաւ Կարնոյ կողմերն երբ ուսուցչութիւն կ'ընէինք, ամիս մը յառաջ վերակոչեց զիս և բարեհաճեց այս կողմերն առաքել իւր սուրբ գրաւոր հրամանաւ:

Տիրացուն ձեռքը ծոցագրպանը տարաւ, հանեց մի մեծադիր փոստի թղթի լայնութեամբ հաստ թղթի վերայ խոշոր տառերով գրութիւն և տուեց տէրտէրին:

Թուղթը ձեռքէ ձեռք պտըտեց, գրագէտ, անգրագէտ մի թեթեւ հայեացքով, մի հաստատուն գլխի շարժումով հաւաստի եղան նրա անկեղծութեանը:

— Հայրիկի իր ձե՛ռքն է, վաւերացրին ամենքը:

— Հազար թղթի մէջ կը ճանաչեմ Հայրիկի ստորագրութիւնը,

պարծեցաւ մի երիտասարդ իւր կողքին կանգնած ընկերին:

—Շատ դժուար բան էր ա՛յ, կշտամբեց խօսողի սնապարծութիւնը մի ուրիշը. ամեն երեխայ կը ճանաչի «Հայրիկ» ստորագրութիւնը:

—Քիչ ենք տեսնու՞մ, շաբթական քանի՞սն են դալիս ու անց կենում, քչփշաց երրորդը:

—Կարելի է՝ կեղծ են, պատասխանեց առաջինին մի անհաւատ Թովմասը:

—Դէ Հայրիկը մի առատագութ և բարեսիրտ մարդ է, ուղողին գրում, տալիս է, էլ ընչի՞ պէտք է շինովի լինի:

—Տիրացու աղպէ՛ր, մեր գեղումը վարժապետ չը կայ, չե՞ս քնալ մեր երեխանցը կարդացնիլ, յանկարծ առաջարկութիւն արեց տանուտէրը:

—Սրբազան պարտքերնիս է ազգիս մանուկ սերունդը կրթել. բայց դեռ ժամանակ կայ, դուցէ նուաստութիւնս անարժան թուի ձեր մեծասրտութեան, կամ մի այլ հանգամանք խոչնդոտ կըլլայ:

—Էլ ի՛նչ դժուարութիւն, Հայրիկի՛ թուղթը քեզ համար լաւ ա վկայում, մենք էլ վարժապետ չունինք, գեղումն էլ մի օրինաւոր գրագիր չը կայ, գեղական դատարանումը օրինատետր կայ, քեզ կը տամ, քիչ քիչ կը սարվես, քե՛զ էլ օգուտ կըլնի, մե՛զ էլ:

—Մենք այդ օրինատետրէն մի հատ մը ձեռք բերած ենք, բովանդակութիւն մեզի քաջ ծանօթ է, անոր համաձայն գործավարութիւն ընել մեզի համար դիւրին է:

Տիրացուն հանեց նոյն ծոցագրպանից մի գիւղական օրինագիրք:

—Դէ՛ բանը գլուխ եկաւ էլի՛, յուսադրեց տանուտէրը. կա՛ց, մի՛ վախիլ, դու էստեղ մեծ շահմունք կ'ունենաս, մի սիրուն աղջիկ էլ կ'ուզենք քեզ համար, կը պսակենք:

—Աստուած չընէ, միայնակեցութեան ուխտեր եմ ի մանկութենէ:

—Տէրտէրը թողութիւն կը տայ, քնաս չունի:

—Կա՛ց, տիրացո՛ւ, կա՛ց, լաւ է ասում մեր տանուտէրը. էս է՛ ես ծերացել եմ, մի քանի տարուց յետոյ քեզ կը ձեռնադրենք, խորհուրդ տուեց քահանան:

—Տէր ինքն ինչպէս տնօրիներ է, անոր սուրբ կամքը թո՛ղ օրհնեալ ըլլայ:

—Անունդ ի՞նչ ա, տիրացո՛ւ, մէջ խառնուեց Մելիք-Բաղալը:

—Աւաղանիս անուն Մաղաքիա Բաստուրմաճեան է, բայց զըպրոցական անունս Հայրիկ հաճեցաւ կոչել Տաճատ Գնթունի:

—Արտակ Պալունի, Հմայեակ Դիմաքսեան, Խորէն Խորխոռունի...

—Արայ Արամեան, Հաւանակ Վաշտակեան, Հոյ Յուսակեան...

—Յորակ Արքակեան, Պարոյր Պաճուճեան, Պերճ Արբունեան...

Այս անունները միմեանց ետեւից կրկնողներն երեք երիտասարդներ էին. նոքա ոչ ոքի չէին խանգարում, նոքա բերան գիտէին Հայրիկից եկած երիտասարդների դպրոցական կոչումները և իրանց մէջ ծաղրում էին՝ փսփսալով ու ծիծաղելով:

—Ուրեմն, տէրտէ՛ր, գործը վճռուեց, ձայնը բարձրացրեց Մելիք-Բաղալը, մեր տիրացու Տաճատը կը մնայ մեր գեղումը. շատ լաւ իրար ենք ընկել, մեղանում գինին բօլ, սրա էլ հին անումը Բաստուրմաչի, նորն էլ Գնթունի, էս վերջինի թէ գիրը դուս կը քըցենք, մենք շուտ խօսող մարդիկ ենք, լեզուներիս տակիցը կը սլալ դուս կ'ընկնի՝ կը մնայ Գնունի. յետոյ կը նստենք լազաթին բաստուրմէն տոժալով շամիրիցը սիպտակ լաւաշի մէջը դուս կը քըշենք, գեղգրով (գրգռող) գինին էլ կը դնենք դնչներիս, էլ ի՞նչ դարդ ունինք. կե՛ր ու կոնծա՛, դէ քէ՛ջ արա, Բաստուրմաչի՛—Գնունի, ծծա՛ ու ծծա՛, կաց ու պռօշներդ ծպծպացրու, բեղերդ լպստի, վախի՛լ մի՛, հատնիլ չի:

—Ներեցէք, յարգամեծար իշխա՛ն, որքան ալ մեր հին և նոր ազգանուններ յարմար են ձերին ասութեան, բայց մենք նախ՝ ուխտած ենք եօթ տարի սուրբ Կարապետու պահջ պահել և երկրորդ՝ գինիի հոտ ու համ առած չենք ցարդ:

—Դէ՛, ասա թուրք ես էլի՛:

—Մեղա՛յ Աստուծոյ:

—Դէ՛, կարդացողը դու ես, մենք անգէտ գեղըցի ենք, հիմի դո՛ւ ասա, հայ-քրիստոնէի հաւատը գինու վրայ չի կապա՞ծ:

—Ան ուրի՛շ բան:

—Դէ՛, տեսա՞ր, որ ես իմ բռազեալ (տգէտ) տեղովս քեզանից շատ բան գիտեմ, դեռ էն մի խօսքն էլ քեզ բաշխեցի, չ'ասեցի թէ ո՛վ ա տարին 12 ամիս բանջարեղէն ուտում:

—Բայց արդէն դուք զիս արբեցողի մը ընկերն քրիք և խոտախեր կոչեցիք, ադ փոքր ինչ վիրաւորական է:

—Է՛յ, խելքդ ո՞րտեղ ա, տիրացո՛ւ, ես քեզ իմ հընկերը շինեցի, ի՛մ, ինձ չե՞ս հաւանում, քեզ պէս օխտը տղայ ունիմ. ես որ մի օր գինի չեմ խմում, իրիկունը գնում եմ տէրտէրի առաջին չոքում, մեղայ գալի, թողուլթիւն առնում. հէնց գիտես մենք հայ-քրիստոնեայ չե՞նք. գինի էլ ենք խմում, պաս էլ ենք պահում. բաս՝ քո ասելով՝ մենք պիանիցներ (պէնցող) ու հայվաններ ենք էլի. խօսք էր, սաղեց՝ տեղն եկաւ, ասեցի. ի՞նչ ես փալանդ շուռ տալի (վերադարձել):

—Մի՛ նեղանալ, տիրացու Տաճա՛տ, մեր Մելիք-Բաղալը հանաք է անում, սա մեր գիւղի իշխանն է, սրա քաղցր խօսքերը քեզ էլ դուր կը գան, ականջներդ կը վարժուին, հասկացրեց տէրտէրը:

—Այժմուս կը հասկնամ, որ յարգամեծար Մելիքին ըրած անմեղ կատակ մ՛ է:

—Տօ՛ արի, խելօ՛ք, վախիլ մի՛, մենք կը բարեկամանանք, նորից շարունակեց Մելիք-Բաղալը, արի՛ գնանք էս գիշեր մեր տանը մի լաւ քէֆ անենք, կնիկս իր դմբռձիկ (փոփփէ) ձեռներովը քեզ համար մի կակող տեղ կը քցի, թէ կուգես՝ ոտներդ էլ կը մաժի (շփել). վախիլ մի՛, ես ծերեմ, բայց կնկանս աչքումը դեռ եղ կայ, գիշերն երազումդ կը տեսնես, կերածդ կը մարսես, առաւօտը քէֆով վեր կը կենաս:

—Հրամանքնիդ բաւականին զուարճախօս անձ մը կերելիք, անմեղ կատակներ կը սիրէք, ինձի նման նորատի պանդուխտին քիմք կ'ուզէք պարարել ձեր պարկեշտուհի տիկնոջ մայրական հրապուրանքներով և հայուն յատուկ հիւրասիրութեամբ:

—Ո՛... օ՛... օ՛... լա՛ւ ես, լա՛ւ, մեր տղայ՝ բերնումդ համ ես ունեցել, ձեռաց հասկացար, որ հալիւոր մարդի հընկերն ատամները թափուած պառաւ կըլնի, դունչդ ջահէլների փէշերքին ես մեկնում. վախիլ մի, իմ խաթունը վրայ հինգ կնիկս ա, քո տարիքումն անձախ (հալխ) ըլնի, ամեն մի աչքը ձեր հոսհոսների զայֆի ֆնջաններից մեծ ա, ա՛յլը (իսկ ե իսկ) քեզ պէս սուտ ճգնաւորի ու խաբեբաների շալալը տալու ապրանք ա, արի՛ գնանք:

—Շա՛տ շնորհապարտ ենք, սակայն արատիք կը բերէք անբժուկեանս:

—Դէ՛, դէ՛, արի՛ դնանք, ա՛յ դարմանի տակի ջուր. խաչագող վանեցի չե՛ս, զող կատուի աչքերիցդ ա մալում (յոյանի), թէ ի՛նչ պտուղ ես, ամեն մի մազիդ տակին օխտը սատանայ կայ. ասար Օսմանլուի խաչագողերն էլ վանեցիք են, Սալմաստցոնց հարեան էք է՛:

—Այդ արդէն կարի անարգական է, դէմքի վերայ տհաճութիւն արտայայտեց Գնթունին: Բայց Մելիք-Բադալը նրա վզակոթը թոթոռելով՝ շարունակեց իւր ծաղրածութիւններն և դէպի իւրեանց կողմը քաշեց:

—Տէրտէ՛ր, տանուտէ՛ր, դարձաւ Մելիքը դէպի վերջիններս, դուք էլ եկէ՛ք գնանք, մեր Գնունի Բաստրմաչու հետ մի քիչ սէր ու սոհրաթ անենք, սրան երկու տարեկան քուռակի պէս խամահանուկ անենք (վարժեցնել), թէ չէ սա շատ ա տռճինկ քցում:

Աւելորդ է ասել, թէ Եջմիածնի ուխտաւորի ուխտը յետ թողուեց զիպող ժամանակին կատարելու:

Օ. գիւղի հիւրասիրութիւնը, Մելիք-Բադալի համեղ կատակները, երեսուն երեսնէքանց ուսուցչական առատ վճարքը և որ դըլխաւորն էր, տանուտէրի առաջարկութեամբ գիւղական գրագրի իւղալի պաշտօնը խիստ հաճոյական թուեցին Հայրիկի առաքեալին:

Ի պատիւ Գնթունուն պէտք է ասենք, որ նա մինչև էս օր էլ զինու հոտը չի առնում. ուխտագրուծ գտնուեց միայն սուրբ Կարապետի դէմ. առաջին իրիկունը Մելիք-Բադալի համոզմամբ պասը բաց արաւ՝ ծերութեան օրերում ուխտը վերանորոգելու պայմանով:

ԺԲ.

ՇԱՆ ՀԵՏ ԱՂՊԵՐԱՅԻ, ՓԵՏԸ ՁԵՌԻՑԴ ՄԻ՝ ՎԷՐ ՔՅԻԼ.

—Բարև՛ ձեզ, պ. Գնթունի՛, ի՞նչպէս էք, ծանրախոհ դէմք առած՝ երկու մատի ծայրով արժան տեսաւ Բալասան աղէն զիպչել գիւղական գրագրի խոնարհութեամբ պարզած ձեռքին, երբ վերջինս շողոքորթ ժպիտով անվստահ յառաջ եկաւ դէպի Մելնիկովը:

—Ողջութիւններդ կը ցանկամ, վսեմափայլ տէ՛ր, իշխա՛ն հայկազն:

—Ի՞նչպէս էք կառավարուում այս լեռնային արջերի մէջ, նեղութիւն չէ՞ք կրում, չէ՞ք յուսահատում:

—Սկզբներ շատ խորթ կը թուէր մեզի ասոնց անկրթութիւն, բայց հետզհետէ վարժեցանք, այժմ իրենց ալ սակաւիկ մի քաղաքակրթեցինք, մարդավարութեան ուղին առաջնորդեցինք:

—Յետոյ օտարութիւնը ձեզ զգալի չէ:

—Անշուշտ հայրենեաց անձուկ շարունակ կը տուորէ հոգիս, սակայն պարկեշտ լծակից մը և գողտրիկ մանկիկ մ'ունենալէս վերջ՝ բոլորն ալ անցան:

—Լսել եմ, այո՛, մեզ հայրենակից ես դարձել, շատ ուրախ եմ. իմ կարծեօք, դժուար կը լինի ձեզ օտարութեան մէջ՝ առանց սեպհական տուն ու տեղի՝ առանց այգու և հողի՝ միայն գրագրական սահմանափակ ռոճկով ընտանիք կառավարել:

—Ձեր շնորհիւ, ողորմած բարերա՛ր, այժմ տնակ մը և փոքրիկ այգի մի ևս ձեռք բերած ենք, նախախնամութիւն մի պատառիկ ցամաք հաց ալ խնայած չէ, կ'ապրինք կերպիւ իւրիք:

—Հա՛, այդ չը գիտէի, շատ շո՛ւտ, կարծեօք, ձեր գալը հինգ տարուց աւելի չէ:

—Այո՛, այդպէս է, բայց մեր դատաւոր Խուդավէրդի բէգին շընորհիւ, գիւղական տանուտիրոջ մարդասէր ներողամտութեամբ տեսակ մը կենաց եղանակ գտած ենք:

—Մեր վարժապետը հիմի լաւ փող էլ ունի, աղա՛յ, մէջ մտաւ Խուդօն, շահով տուած ա մօտիկ գեղերի թուրքերի մէջ, սրա ֆանդ ու ֆէլը (հարապիպոս-թի-ն) ոչ ով չի՛ իմանալ, մենք ինչքան ուզենք՝ ձեռք պատը կը քսի, միսուր չի գալ (սուրտալ) ու երկու օրից յետոյ՝ մին էլ տեսար՝ թուրք հաջիներից մնի հինա դրած միրուքը ճանգել ա ու իծի պէս տկի տկի անելով (մէք-ցնէլ) բերում, կոխում դատարան, սանադը զավէրնի անում (завёрнутъ, վաւերացնել), փէչատը (փէթ) կոխում ու ճամփու քցում:

—Ո՞րքան է մեր տուած, քանի մը կոպէկներ, արդարացաւ Գնթունին:

—Հէնց էդ ա է՛, շարունակեց Խուդօն, Հաջի Մուստաֆէն սրան տասը մանէթ էր պարտ, ուզեցայ իմանալ թէ քանի՞ մանէթ էր պարտքի գլուխը. նա ասեց՝ դրանից ո՞վ ա փող առել, դատարանումը զանգատ ունէի, վճռեցիք իմ օգտին, հրամայեցիք սպօլնի (исполнительный листъ, հարապիպոս-թի-ն) տալ. գնալով գալով

հողիս դուս եկաւ, չարէս կտրեց՝ կաշառք խոստացայ. երկու մանէթի թուղթ առաւ բերնիցս մի ամիս ժամանակով, էս ա երկու տարի ա՛ վեց ամսէ վեց ամիս շահը շահին դալով տասը մանէթ ա դառել. ես ի՞նչ եմ հասկանում, ասում ա, ինքը գրիւ ա տալիս իր մոնթերին, ինքը հաշուում, ինքը հաստատում:

—Յետոյ ստացա՞ք թուրքից ձեր փողը, վարժապետ, հարցրեց Բալասան աղէն:

—Ստացաւ՝ էն էլ ո՛նց, աղայ ջա՛ն, պատառնաւ տուեց Խուրօն. վճռեցինք՝ եասալուլը վերկալաւ, գնաց դաշտիցը խեղճ Մուստաֆի ոչխարի սուրուից (հօփ) չորս հատ էնպէս զաւուրմացու շիշակ (եբէոս փորեխն խոյ ոչխար) բերեց, որ աղպէրն աղպօրը հինգ մանէթով չի տալ. շուն—Մուստաֆի հողին դուս եկաւ աղանչաք անելով, որ մինը յետ տայ. էս անիրաւը քարացաւ, քար կտրուեց: Էս գլխամեռն էն ոչխարներիցը 17 մանէթ փող հանեց ու ո՛չ տանուռէրին, ոչ դատաւորներիս մի մի շամփուր խորովածացու էլ չը ղրկեց, որ բերաններս եղտոնէք:

—Եթէ ոտքի վերայ ողջ ողջ է ծախել՝ ի՞նչպէս ուղարկէր, պաշտպան հանդիսացաւ Բալասան աղան:

—Տօ՛ չէ, աղայ՝, քա՛ր ընկնի սրա գլխին, դասաբին մի չարէք միս խոստացաւ, մորթիլ տուեց, ծախեց, փողերը նաղբացրեց, ջէբը լցրեց, ոչ իր տունը մի մսխալ միս ղրկեց, ոչ զասաբ Պապի Գէվօյի միսը տուեց. ասե՛նք՝ Գէվօն սրան հում հում կ'ուտէր, կը խեղդէր, բայց լեզուն կարճ էր, դատարանումը գործ ունէր, պարտքատիրոջ սանադը վճռած՝ սրա ձեռին էր, սպօլն ի՛ն կը տար, փողի տէրը Գէվօյի տան ծածքի կոճերը կը քաշէր:

—Որքա՛ն տոկոս էք ստանում, վարժապետ, հարցրեց Բալասան աղան:

—Տօ՛, աղայ ջա՛ն, դրանից ի՛նչ կ'իմանաս, դու ինձ հարցրու, կրկին ընդմիջեց Խուրօն, անումը՝ տասին երկու շահովն ա, բայց սրա պարտքատէրերն էնքան տխմար են, որ ինչ գրում ա՝ աւատում են. հինգ մանէթին մի տարումը հինգ մանէթ էլ շահ ա առնում:

—Յետոյ չե՞ն կորչում փողերդ, վարժապետ:

—Հատ կապէկը չի կորչիլ, աղայ ջա՛ն, քանի սա դատարանումը պիտըլ (գրաֆի) ա, ոչ ով չի համարձակուիլ սրա քօռ սև փո-

ղին խէթ մոիկ տալ: Գլխովդ եմ երդում ուտում, աղա՛յ, ոնց որ քեզ արդ եմ արել՝ գլա՛ցնին էլ, սուղիէ՛քս էլ սրա բռանն ենք մոիկ տալիս, տանուտէրի հետ միացել ա ու վճռում ա սա՛, կարգադրում ա սա՛, մենք հէնց բերաններս բաց՝ ճանճին անող ձիու պէս գլխներս տմբատբացնում ենք ու ձեռք քաշում: Ի՞նչ ես կարծում, աղա՛յ, ինչքա՛ն փող ունենայ:

— Իմ կարծեօք, սա հիմա փող պէտք է չ'ունենայ, այդ էլ մեծ բան է, որ հինգ տարուայ մէջ տան և այգու տէր է դարձել:

— Դու ո՛չ մեռնիս, աղայ ջա՛ն, 3000 նաղդ Նիկոլայ — մանէթ ունի, ես եմ բոլորը ձեռք քաշել:

— Ուրեմն սա Տաճկաստանից գալուս իւր հետ փող է ունեցել:

— Ի՞նչ ես հրամանք անում, աղայ ջա՛ն, ի՛նչ փող, ի՛նչ դենիշկայ (չէ՞ս չոպէշ), մի ջուխտ թելից գործած Վ. Ու շը կի տրեխ ունէր՝ տակը հարիւր տեղից կարկատան, մի հին պատուտորուած Վանի մազի շալից կարծ չուխի պէս բան ունէր՝ արմնկիցը միսն երևում էր: Մեկիք-Բաղալին հարցրո՛ւ՝ տես ի՛նչ կը պատմի, երկու երեք ամիս նրա տանն էր կենում. մի սիպտակ կտաւի շապիկ ունէր, ասում ա, որ կեղտումը փտել էր, կնիկս, ասում ա, զգուեց որ լուանայ, իմ շապկահահին ա ճղել, գլուխն անց կացրել, մի տեսակ եօլայ տարել, ընչանք գնացել ենք Պուլուզի դռքանիցը նիսիա (սպաս-ի) մի քանի գազ ամբքեան վերցրել, շուլալել՝ շլինքը քցել:

— Կարծե՛մ, գլխիցը դուրս է տալիս, վարժապե՛տ, էս փչի տաւը խօսքից մինն ուղիղ չէ, նորից պաշտպանողական դիրք ստացաւ Մեշնիկովը:

— Մասամբ ճիշդ է, գերազնիւ Տէ՛ր, Վանէն ելայ մաքուր հագուստով, բայց քիւրդեր ճանապարհին զիս կողոպտեցին, բոլոր ինչքս տարին, մնացի մերկանդամ. մերձակայ գիւղականք զիս գտին, իւրեանց ցնցոտիքով զիս պատսպարեցին: Անոնց հետսիքովն էր, որ մտանք այս գիւղ:

— Տօ՛, աղայ ջա՛ն, դու սրա խօսքին մի՛ աւատալ, ի՛նչ թալանել, ի՛նչ քուրդ, թալանուողի ձեռքին թղթերն ի՛նչ բան ունէին, շորերը կը տանէին ու մի խուրձը գրեր յետ կը տայի՞ն. սրա ծոցը լիքը թղթեր էին:

— Այս ի՞նչ գրեր է պատմում, վարժապե՛տ, ի հարկէ չեմ հա-

ւատում. սա սովորել է ամեն ինչից, անկապ, անտեղի ցոփաբանութիւններ անել և, անտարակոյս, այժմ էլ կատակ է անում, հարցրեց Մելիկովը:

—Մեր յարգոյ դատաւոր Խուզավէրդին իրաւ կըսէ, հետո Հայրիկին և քանի մը հատ ալ ուրիշներու յանձնարարականներ ունէինք, որոնք քիւրդեր մեզ վերադարձուցին՝ զիջեալ մեր աղերսագին թախանձանքներէն, մեզի նման անսիրտ և անստակ ուղեւորին անշուշտ կարեւոր են անոնք՝ ջերմեռանդ հայ ժողովուրդին մէջ արժանավայել ընդունելութիւն գտնելու, ինչպէս ալ մեզի հետ եղաւ, ամենուրեք յարգանք կը պատուասիրէին:

—Իրաւ, այդ յանձնարարականներն ի՞նչպէս են ձեռք բերում, վարժապետ. ինձ շատ է պատահել Տաճկա-Հայաստանից եկածների ձեռքին տեսնել Հայրիկից և զանազան վանահայրերից ու առաջնորդներից տուած յանձնարարական թղթեր, և միթէ անպատճառ կարեւոր են նոքա:

—Անշուշտ:

—Հե՛շտ են ձեռք բերուում:

—Հայրիկէն խնդրելու ոչինչ դժուարութիւն չը կայ, ան զթոռ և բարեհամբոյր հայր է ընդհանրութեան, անգամ մ' եթէ դիմես իրեն, կուտայ՝ ով կուզէ, թող լինի. մեծամեծ դժուարութեանց կը հանդիպին միւս վանահայրերու և առաջնորդներու քով, առանց ստակի (դրոմ) հազիւ կը յաջողի. ի՞նչ ընելու է, պիտի տալ, ապա թէ ոչ նպատակին անհնար է հասանել:

—Մի՞թէ:

—Այո՛, Տէ՛ր, հայ ժողովուրդ վարժած է այդ յանձնարարականներուն, վանահայրեր այդ քաջ գիտեն և ստակի կը կապեն. ըստ իս՝ ամենայն իրաւամբ, անոնց թուղթ մեծապէս կը նպաստէ, մանաւանդ՝ որք խոշոր գումար մը շահելու կը միտին:

—Դուք էլ փող տուի՞ք:

—Քանի մը տեղ Հայրիկին յանձնարարականն օգնեց, սակայն սուրբ-Վարապետ՝ սակաւ մնաց Հայրիկին յանձնարարականէն զրկուէինք և մենք ալ դանակոծ դուրս մնայինք:

—Ի՞նչպէս:

—Մենք տեղեակ չէինք սուրբ-Վարապետայ միաբանութեան

տհաճ տրամադրութենէն առ Հայրիկ, հիւրընկալին դիմեցինք յանուն Հայրիկի մեզի պատասպարելոյ. նա առժամայն բռնկեցաւ, խաբեբայ Վանեցի և այլ վիրաւորական ածականներ տեղաց մեր գլխուն և կոչեց իւր սպասաւոր, մեզ պարսպէն վանել հրամայեց: Բիրտ ծառայն մեր բազուկ ճմլեց վայրենի քիւրդի նման և հայհոյանքներ թափելով՝ մեզ դուրս վռնտեց: Նրեկոյ էր, ուր երթալնիս չը գիտէինք, ընտրեցինք ստակի անուամբ մեր զործ տեսնել: Հասինք բաղձանացս, քանի մը ղուրուշ կորուսինք, բայց հոգ չէր, զործերնիս յաջող ելք ստացաւ:

— Այդ շատ հետաքրքիր է, խնդրեմ պատմես, վարժապետ:

— Սպասաւոր դադոնապէս մեզ իւր սենեակն առաւ, խորհուրդ տուաւ մեզ Հայրիկի անուն չը տալ, հարցասիրաց քով հայհոյանօք խօսիլ անոր դէմ, կշտամբանք ու լուտանք թափել նորա ստուերին և յանձնարարականին յիշողութիւնը չընել: Մենք ալ այնպէս ըրինք: Միւս օր սպասաւորին ձեռօք քսան ղուրուշնոց աջահամբոյր մեզի կարապետեց առ հիւրընկալ: Քանի մ' օր ալ այնտեղ մնացինք, վահահօր ծառային ծանօթացանք, շահեցինք, վերջ՝ քառասուն ղուրուշնոցով յանձնարարական մը ձեռք բերինք: Ի՞նչ ընելու էր, սուրբ-կարապետայ անուամբ հայ գիւղական շուտ կ'ողւորի. անոնց թուղթ մեզի մինչև Կարին շատ ձեռնտու եղաւ, ամենուրեք հիւրասիրութիւն գտանք, քանի մը ստակ ալ ծանապարհի պարէն առինք, որով թէ մեր պիտոյք հայթհայթեցինք և թէ Կարնոյ առաջնորդին յանձնարարականը շահեցանք:

— Ուրեմն ընդամենը դուք երեք թուղթ էք ունեցել ձեզ հետ:

— Տօ՛, դրա խօսքի քա՛նխսը մի շահով կ'առնեմ, աղայ ջա՛ն, էլի կ'ոտրած դրգալի նման մէջ խառնուեց Խուզօն, դա որ եկաւ, ծոցաջէքերը հէնց էին տազած՝ կ'ասէիր երկու շաբթէն ջահէլ ծնընդկանի ծծեր ընէին. ի՞նչ երեք թուղթ, ի՞նչ քան սուտ սուտ փէշատներ, ի՞նչ Տէրսկամ որդու կոնդակներ, ի՞նչ մատնահարներ, մմոտ թղթեր, սրբի պատկերներ:

— Ուղի՛ղ է ասում, վարժապետ:

— Բարուրանքներ կը բարդէ մեր վերայ, մեր ունեցած թղթեր մեր յիշատակարաններ էին. արդարեւ կուզան այդպիսի թղթերով Տէր Յուսկան որդւոյ, Պտկայ սուրբ Գէորգայ ղուլեր, կոնդակներ ու մատ-

նահարներ կը բերեն, խաչեր ևս կ'ունենան, բայց այդ մենք չենք, օտարք կրնեն:

—Դէ՛, բոլոր ձեր վանեցիքն են էլի՛, ընդհատեց Խուզոն, սաքի ի՞նչ ես թաքցնում, մենակ դու հօ չե՛ս, օրը մին ա՛ եկողը տասը. ձեր ոտը կոտրուի՛, գեղ չը կայ՝ որ բուն դրած չըլնիք, քանդեցի՛ք, քարատակեցիք էս երկիրը:

—Կը մեղանչես, թափառաշրջիկներ տգէտ ռամիկներ են, Արծուի-
Հայրիկին ձեռեր միայն վսեմ՝ դադափարներ և լուսաւորութիւն կը տարածեն, ուր կերթան:

—Սաքի ո՞վ են քո Հայրիկի աշակերտները:

—Դուք ինձնէ քաջ կը ճանաչէք, ամբողջ Այրարատ նահանգ, Գողթնիք, Սիւնիք իւրեանց զիւղերով անոնց դատարարակութիւն կը վայելեն, որոցմէ վերջին նուաստս, կարծեօ՛ք, ըստ կարեացս սակաւ ծառայութիւն ըրած չենք ձեր զիւղին. սնապարծութիւն կ'ատեմ, բայց ճշմարտութիւն գաղել յանցանք կը համարիմ:

—Ձեր ճամփէն փուշ ու տատաշ դառնա՛ր, էս աշխարհքը չը մտնէիք. էլ գե՛ղ, տո՛ւն, օջա՛ղ, ընտանի՛ք թողե՛ր էք, որ չը փշացնէք, ամեն տեղ հիմն արեգակ շուռ տուիք. Իգդիրը ձեր ձեռոյն ընչանք էս օր էլ արնի մէջ լեղ ա տալիս, Աշտարակ՝ հէրը որդուց հանեցիք, բաժան բաժնութիւն քցեցիք, երեխէքանցն իրար հետ թշնամացրիք, Ղամարլու՝ աղքատների բերանից սուտ սուտ սանադներ շինեցիք՝ հարուստներին ծախեցիք, Մարգարի գեղումը միամիտ հարսներին ճանգեցիք, աղջիկ փախցրիք, գեղն երկու թիրաց (չուսուցու-նիւն) արիք՝ էս օր էլ իրար միս են ուտում. Ագուլիս, ասում են, քիչ մնաց ձեր ձեռքովը հաստատ ուսումնարանը շուռ գայ. ո՞ր մինը միտս բերեմ, քանի՛սը շարեմ, հաւողի մատն ուտող դաղձի սկէս բռնել էք էս աշխարհքը, փաթաթուել խեղճ ժողովրդի բողազին, հուփ էք տուել, աչքերը գաղաթն էք թուցրել, հլա էլի՛ խօսում ե՞ս...

—Կարծեմ, ինձնէ օգտէ աւելի ոչինչ տեսած չէք, ձեր եկեղեցին այսօր պայծառ կը փայլի նուաստիս ջանքով, մանուկներ հրեշտակաց հետ սրբասացութիւն կրնեն, ինքնին խոստովանեցար՝ ձեր զիւղ բարուք կը կառավարի, ամենուդ ևս ձեռքէ եկածին չափ կը ծառայենք. այժմ ալ գերազնիւ հայրենասէր տէր Մելիկեան

իշխան մեզի հրաման ունի արձակելու, որ շնորհ ըրեր է իւր լուսափայլ դիմաց տեսութեան անարժանա արժանացնելոյ:

— Յետոյ մէջը ոչինչ շահմունք չունիս էլի՛:

— Մենք անդոհին մէկը չենք, այդ մասին կանխաւ խօսեցանք:

— Մի՛ նեղանալ, վարժապետ, խօսեց Վլադիմիր Նեստորիչը, սրանք ողջ գիւղով ի նախնեաց անտի ապերախտ շներ են, ինձ դէմ էլ ապաշնորհութիւն են անում, ձեզ հօ՛ լաւ յայտնի է, թէ ես այս գիւղին ի՛նչ մեծ բարերարութիւն եմ անում:

— Քաջ գիտակ եմ, Տէ՛ր, մուրհակներ բոլոր մեր գրածն է:

— Հապա տեսնում էք, սրանք էլի իմ շուաքիս վերայ հաշում են:

— Կը մեղանչեն:

— Թողնենք այդ, պ. Գնթունի՛, մենք գործ ունինք կատարելու: Բալասան աղան աչքով նշանացի արեց Խուդոյին և նա դուրս գնաց:

— Գիտէք, ի հարկէ՛, թէ ընչի՛ եմ ձեզ կանչել:

— Կը գուշակեմ, մուրհակների թուականներ փոխելու, շնչաց գրագիր վանեցին:

— Բաւական չէ:

— Գումարն ևս շարժելու է անշո՛ւշտ:

— Հասկացա՛ր. մի քանի անպիտաններ երկար ժամանակ ինձ տանջում են, պէտք է սեղմել դրանց. դիցո՛ւք, ես վերջը կը բաշխեմ, բայց այժմ այդ մեզ պէտք է:

Բալասան աղան նախապէս պատրաստած ունէր ցուցակը և փոխելիք գումարների որքանութիւնը: Այդ պատճառաւ էլ նա կարիք չունեցաւ մի առ մի թեւադրել Գնթունուն: Վերջինս շատ քաջավարժ էր երեւում քերել— ջնջելու և նոր գրելու մէջ: Նրան օգնում էր իւր փոքրիկ, յղկուած, ոսկրէ կոթով սրածայր գրչահատը: Մեծ գործ էր տեսնում քերուած տեղը թանաքը չը ծծելու համար վանեցու գտած հնարքը. եթէ շօշափելու լինէինք նրա ձախ բութ մատի եղունգը և համեմատէինք աջի հետ, ձախը շատ բարակ կը գտնէինք: Գրագիրը քերում էր եղունգը և փոշին քերած տեղը դանակի կոթով տորում: Թանաքը դործում էր՝ ինչպէս մաքուր թղթի երեսին:

Մինչ Վանեցի վարժապետն իւր գործը տեսնում էր, Վլադիմիր Նեստորիչը շարունակ սենեկի երկայնութիւնը չափում էր իւր քայլերով:

— Վերջացա՛ւ, բոլոր կատարուեցաւ գերազնուութեանդ կարգադրութեան համաձայն, ասաց Գնթունին:

— Լա՛ւ, այժմ վերցրո՛ւ մի թերթ թուղթ և գիւղի կողմից նաչալնիկի անուամբ մի խնդիր գրիր, որի մէջ յայտնիր ամբողջ հասարակութեան ջերմ ցանկութիւնը՝ Խուղօյին տանուտէր ունենալու իւրեանց մէջ:

— Աղէ՛կ մտածեր էք, մեր ալ փափաղն է, Խուղափէրդի-բէզ կատակներ կը սիրէ, բայց մեզ հովանաւոր է:

— Ե՛ս եմ քո հովանաւորդ, վարժապետ, ե՛ս, քանի ես կամ՝ դու ապահով ձեռի ու կտրի, ոչ ոք մազիդ չի կարող մօտենալ:

— Յմահ երախտապարտ եմք, ասաց գրագիրն և թուղթը ձեռքէն առաւ:

— Պատրա՛ստ է, փոքր ժամանակից ձայն հանեց նա:

— Այս կը ֆնայ ինձ մօտ, պատասխանեց Մեխիկովը, վաղը մի քանիսին կը կանչեմ, ինքս ստորագրել կը տամ, անգրագէտների կողմից էլ անելիքը քո բանն է, Խուղօյի ձեռքով քեզ կ'ուղարկեմ, բայց աշխատիր, որ ձեռքերը, որքան կարելի է, միմեանցից զանազանուին:

— Միամիտ կարող էք ըլլալ, Տէ՛ր, մենք երեսուն եօթ տեսակ գրութեան մէջ վարժուած ենք. Վարագ՝ դպրոցն այդպիսի վարժութիւններ կրնէինք Հայրիկէն գաղտնի, գաւառներ կարեւոր են դոքա. անգամ մ'ալ Հայրիկ տեղեկացաւ, շատ վշտացաւ և պատուիրեց գէթ ի չարն գործ չ'արկանել:

— Վեր կա՛լ հետդ այս մուրհակի թղթերը:

Վլադիմիր Նեստորիչը տուեց գրագրին բաւականին մուրհակի դրոշմած թղթեր:

— Կնքեմ, այնպէս չէ՞, ընչանցքի տակին ժպիտի նշոյլ երևեցնելով հարցրեց գրագիր Վանեցին:

— Հետն էլ վաւերացրո՛ւ:

— Տանուտէր Կարապետի ձեռք կը բաւէ՞, թէ դատաւորներուն ևս դնեմ:

—Այն մէկը որ ձեռք դիտէ՛:

—Անհո՛գ եղիք, պարծա՛նք հայրենեաց, գիւղիս բոլոր ազգեցիկ անձանց ձեռք մենք կարող ենք կեղծել, իւրաքանչիւրին վերայ ժամեր վասնած ենք:

—Ուրեմն մի քանի թերթ հասարակ մաքուր թուղթ ևս վերցրո՛ւ քեզ հետ:

—Կնիք շա՛տ մօտ ըլլայ:

—Որը մօտ, որը հեռու, զանազան նպատակների համար:

—Քաջ գիտեմ, երեկեան օր հարիւր թերթի չափ կնքեցինք և վաւերացուցինք տանուտէր Կարապետի համար, նա կը զգայ, որ առաջիկայ ընտրութեան իրեն հերթ հասնելու չէ. նուաստիս յանձնեց իւր համար պատրաստել: Քանի մը հատ ալ մեզի համար կընքեցինք:

—Ընչի՞դ էր պէտք, կամ տանուտէրն ի՞նչ պէտք է անի:

—Ապագային մեծ կարեւորութիւն կայ, խնդրողներ անպակաս են, զանազան կեղծ կալուածագիրներ, կեղծ մուրհակներ, կանխավճար ապահովագիրներ շինելու պէտք կըլլան:

—Յետոյ չե՞ս վախենում յայտնուելուց:

—Հօր պաշտպանս ողջ ըլլա՛յ:

—Իսկ եթէ ես չը պաշտպանե՞մ:

—Մենք աներկմիտ ենք, թէ կը գնահատէք չնչին ծառայութիւննիս և չէք թոյլ տար օտարաց օգնութեան և միջամտութեան դիմելու:

—Օ՛... օ՛... Վանեցի՛, լաւ եմ հասկանում, ուզում ես ասել՝ թէ զողն և զողակիցն ի միում պատժի կան. ձեռաց կը մատնես, էնպէս չէ՞, ուղի՛ղն ասա:

—Վստահ ենք, որ դործն այդտեղ հասուցանելու փոյթ չը լինիր:

—Աղայ ջա՛ն, ներս մտաւ Խուղօն, լաւ միտս եկաւ, երեկ ադ վաւատ Ձոլախ-Յարութիւնն էստեղ էր, որ քո հրամանքի կողմից գնացել էր Ղվակութենց Հայրօջի մօտ: Ասում էր մի թուղթ ա հարկաւոր դրել տալ, որ գեղըցիք վկայեն, թէ Դօնդարենց Ասօյի սպանուած օրը Հայրօն սաքի գեղումը չէր, բամբակները տարել էր Երևան ծախելու. ասում էր՝ մի թուղթ էլ ինքը շինել կը տայ Երևանի զանթարի (չշարք) տակի թուրք դալախների կողմից՝ սաքի

Թէ Հայրօջի բամբակներն էն օրն իրանք են ծախել, Հայրօն ընչանք իրիկուն ղանթարի տակին ա էլել:

— Իրա՛ւ, վարժապե՛տ, քաղցր դէմքով դարձաւ Մելնիկովը դէպի գրագիրը, մի այդպէս թուղթ էլ պատրաստիւ էն Հայրօջի համար. ի՞նչ յիմար բան դուրս եկաւ. ես պատուիրեցի գնդակն այնպէս արձակել, որ պատուհանը կտորի, գնաց առաստաղումը ցցուի, որ միայն երկիւղ տանք փուչ Ասօյին, անշնորհքն այնքան ցած է նշան տուել, որ գնդակը դիպել է Ասօյի գլխին և սպանել: Դիցուք, արժէր, փշերի մէկն էր, ասում են սրտէ՛ ի սիրտ ընկեր էր Պետրոսենց Սամփսոնի հետ, եթէ նա չը լինէր, Սամփսոնն անտրտունջ կը հեռանար Բարսեղի աղջկանից. ասում են, որ հերու էլ այն փուչն է եղել մեր դրանը կուպր քսողը. շատ լաւ էր, որ վերջացաւ, պրծաւ. բայց ի՞նչ օգուտ, որ անպիտան Հայրօն գլխնե՛րիս ցաւ դարձաւ. ուզեմ՝ չուզեմ, պէտք է ազատեմ:

— Խոհեմութիւն վեհմութեանդ յատկանիշն է, գռեհկին մէկն է Հայրապետ, կարող է բերանէն հանել և ձեր անբիծ անուանն արատիք պատճառել:

— Ընչո՞վ կ'ապացուցանի:

— Աստուածատուոյ հայր Վարդան, կարծեմ, Սիսակին ձեռքով ինքնաձեռագիր ստորագրութիւն մ' առեր է գիւղականաց շատերէն, որով կը ստուգուի, թէ Հայրապետ Դվակութեանց գիւղին մէջ շարունակ գողութեամբ կը պարապէր և անոր գողացած իրեղէնք երկիցս գտեր են ձեր քեռորդի Վասակին քով. պղնձապատ զօտու անցքն ալ մէջ յիշեր է:

— Հապա՛, այդ գօտին էլ քիչ աղմուկ չը հանեց, անպիտան Հայրօն մի քանի բաների հետ այդ գօտին բերել էր քաղաք մեր տունը: Ես, իբրեւ անպէտք բան, անկիւնը ձգեցի: Կինս միամտաբար բաշխել էր մեր ծառային. նա էլ կապել էր մէջքը, գնացել փողոց: Սատանէն հակառակ է լինում. հէ՛նց այդ օ՛րը պէտք է Անտօնենց Սահակը քաղաք դար, մեր ծառային հանդիպէր, գօտին ճանաչէր, պօլիցիա կանչէր և միջքիցն արձակէր: Յիմար ծառան էլ պարզ ի պարզոյ խոստովանել է, թէ տիկինն է բաշխել: Դիտէ՛ք, վարժապե՛տ, որչա՛փ նեղութեամբ կարողացայ պօլիցիականին մի տեսակ արձանագրութիւնը փոխել տալ և գրել, իբր թէ ծառան փողոցումը

մի թուրքից է գնել: Անելիքն արինք, պատասխանատուութիւնիցդ ազատուեցանք, բայց ժողովրդի բերանից ոչ. ամբողջ ամիսներով գիւռ քաղաքի խօսակցութեան առարկան էր:

—Աղայ ջան, մի գիր էլ գրիլ տուր, թէ Բարսեղի աղջիկն իմ քեռու հալալ թոռը չի՝ խորթ ա, խնդրեց Խուզօն:

—Ահա՛, վարժապետ, ձեզ տգէտ գիւղացի, շարունակեց Բալասան աղէն, կարծում է՝ թէ գիրն է, որ Հասսը հասցնելու է, քանիցս իրեն ասել եմ, դարձեալ իւրն է կրկնում. տօ անասուն, թղթով գործ չի յառաջ գնալ, մինչև ես Վանքի խցերն օրական հինգ անգամ անլուայ ելու մօտ չանեմ, մինչև դու քսան անգամ լիքը չը գնաս, դատարկ վերադառնաս, մինչև գործակալի ձեռքով երգմնական քննութիւն չը կատարուի՝ գործ յառաջ կերթա՞յ:

—Ներողութիւն կը խնդրեմ ազգասիրութեանդ ձանձրոյթ մը պատճառելոյ, շողոքորթ ժպիտն երեսին, պարանոցը ծռեց Գնթուհին:

—Ասա՛, ի՞նչ կայ:

—Այներև է, որ եթէ Սիսակ գիւղական գրագիր լինի, վսեմութեանդ այս ամենայն դիւրութիւնք կը դժուարին. կանխաւ ձեր մեծութեան կը յայտնեմ, որպէս զի ամենատեսակ հնարք ի գործ դրուին Գոմշակերեանց Յարութիւնին ընտրութիւն խափանելէն յետ՝ առաջիկայ ընտրելիք տանուտէրին պատուէր մ' արձակել՝ անարժանութիւնս ձեռքէ չը հանել. նուաստս կը խօսի յօգուտ ազնուութեանդ, Սիսակ ձեր շահերուն չի բռներ:

—Գնա՛, ապահով եղի՛ր, վարժապետ, ես ողջ մնամ քեզ համար, երկիւղ մի՛ կրիր, ոչ ոք քեզ դիմադրել չի համարձակիլ. հինգ օր չանցած՝ Սիսակին բանտարկել կը տամ, դու աշխատիր վարժուել նրա ստորագրութիւնը կեղծելու:

—Մառայդ արդէն յաջողած է, մեծադիր երեսներ կարենք գրել անոր ձեռքով:

—Ուրեմն, բարի գիշեր՛ր, վաղն այդ բոլորը պատրաստ լինին:

—Կա՛ց, կա՛ց, նորից վերադարձրեց Մելնիկովը գրագրին միւս սենեկից, լաւ յիշեցի, անցեալ օրը փաստաբան Վասիլիւիչն ասաց Հայրօյի գործի մասին՝ թէ վատ չէր յանցանքը մի ուրիշի վերայ կարկատուէր. ի՞նչ ես կարծում, ի՞նչպէս անենք, ո՞ւմ վերայ բարդենք, թուղթն ի՞նչպէս յարմարեցնենք:

—Սպանութենէն քանի մ' օր յառաջ ումանք տեսեր են զՍի-

սակ՝ հրացան ի յուս՝ Հայրապետնց տան քովէն անցնելիս. հարցանողաց պատասխաններ է, թէ իւրեանց այգւոյ մէջ աղուէս մը բուն դրած է, կերթաց սպանելու. մենք արդէն սեւադրութիւն մ' ալ պատրաստած ունինք, ծոցս է, եթէ կամիք, կարդամ:

Վանեցին ձեռքը տարաւ ծոցադրպանը:

—Շատ յետ եկածն ես, վարժապետ, վա՛յ նրան ով քեզ չը ճանաչի, դուխը շարժելով ասաց աղան. դեռ դու Սիսակին թո՛ղ, ես ասում եմ Գալ-ափունի Սամփսոնը լաւ հրացան արձակել է իմանում, մեր Խուռօյի սիրտն էլ շահենք: Դիցուք, Գալ-ափուն լաւ մարդ է, որդին էլ մի հատիկ է, բաց այդ իմ գործն է, դեռ Հայրօյին աղատենք, մեր Խուռօյի տղին էլ պսակենք Բարսեղի աղջկաց հետ, յետոյ որպէս և իցէ Սամփսոնին ես աղատել կը տամ:

—Մենք Խուռափէրդի բէզին հետ ընելիք կընենք, դուք ալ այս գիշեր կարևորը խորհեցէք, կանուխ՝ խոնարհ ծառայող եմ:

—Ել մտածել հարկաւոր չի, դու Սամփսոնի մասին շարադրի, յիսուն մարդի ստորադրութիւն էլ դիր, բաց չը կնքես:

Վանեցի դրադիրը խոնարհ երկրպագութեամբ բարի գիշեր մաղթեց իւր խնամակալին և հեռացաւ:

—Աղա՛, վէզդ ալշու կանգնեց, փուչ կենդանի՛, դարձաւ աղան դէպի Խուռօն, Սամփսոնիցդ պրծար, տղիդ ոտքի տակի քարերը սրբուեցին, մնաց չհասի դժուարութիւնը՝ այն էլ մի փոքր թիկունքիդ ծանրութիւն կը լինի, բաց վանքցոնց կամքի կը բերենք. դու ա՛յս ասա՝ ձայն ու ձուռն չը կայ, տղայքը շատ ուշացան, էն շատ հարկաւոր է:

—Ես վաղուց եմ զրկել, մի կուժ նաւթ իմ ձեռովս եմ հանել քո գէրուզամբից (նիւղ), իրանց տուել:

—Տեսնենք՝ տէրտէրն ի՞նչ կանի:

—Տէրտէրն իր գործը գիտի:

—Գլուխդ մեռնի, մինչև ե՛րբ ես քեզ համար աշխատեմ, դէ՛ գնա՛, գնա՛ տես տղայքն ո՛ւր մնացին, Գալ-ափունին պէտք է խճճել:

ԺԳ.

Ս Ի Ս Ա Կ.

Միւռնոյն երեկոյն Պետրոսենց Գալօյի տանը մեծ պատրաստութիւն կար, ինչպէս ասում են՝ ձեռքների մէկն իւղումն էր, միւսը մեղրումը: Մեծ հացատան թոնիրը զուրս է թողում իւր փորից կատաղի բոցի կոյտերը և մօտ եկողին կլանել է սպառնում. միայն տանտիկինն է, որ խաչերկաթով սանձել է անզուսպ կրակի զօրութիւնը և մեծ մեծ կաթսաները վերան շարել: Ահա քլթքլթում, փլթփլթում են անուշահամ կերակուրները, ահա ճենճի ցայտքումները թոնրի մէջ են թռչում, մի պայծառ լոյս արձակում ոսկեգոյն բոցի միջից և կրկին չքանալուց յետոյ՝ անոյշ բուրմուռնքով քթեր պարարում: Միւս կողմից վերնայարկի սենեակը գորգերով ու կարպետներով զարդարուած՝ կարծես ժպտում է ուրախ և սպասում սիրալիր ընդունելութիւն տալ այս երեկոյն իւր մէջ բազմոյններին: Դեռ սենեկումը մի քանի ամենամօտ բարեկամներ են վեր ու նիստ անում, աւելի պատուելի հիւրերի են սպասում:

Ամենքի հետաքրքրութեան առարկայն լուսամուտի վերայ դրուած մատուցարանն է՝ երեսը ծածկած մի սփռոցով: Երբեմն երբեմն ժողովուածներից մէկն ու մէկը մօտենում, բարձրացնում է ծածկոցը և չոր մրգով լիքը մատուցարանի միջից վերցնում մետաքսեայ թաշկինակի ծայրին կապած յակինթեայ մատանին, տընտղում, գովում և ցած դնելով՝ ձեռքն առնում տասներկու պաճախ հոլանդական ոսկէ մանեակը, զլխի շարժումով հաւանութիւնը յայտնում և կրկին ծածկում:

Այդ Գալ-ափունի տղի—մեր Սամիսոնի նշանն է, որ շուտով պէտք է տանեն Ալէքենց Բարսեղի տունը:

Քիչ քիչ սենեակը կենդանութիւն ստացաւ: Բաւականին անձինք ժողովեցան, սպասաւորողներն էլ մի կողմից սեղանի պատրաստութիւն են տեսնում: Գալ-ափուն մինուճար որդուն նշանը փառաւոր անելու համար՝ մի փոքր շեղումն էր արել սովորական կարգից, կամեցել էր բարեկամներին ընթրիքով պատուել և ապա նշանը տանել նոր խնամոնց տունը:

—Էս ընչի՞ ուշացան, սկսեց լսուել անհամբերութեան տրտունջը, ի՞նչ էլան Գալ-ափուն ու Սամփսոնը:

Նոքա երկուսն էլ տանը չեն, հայրը քահանայի քամակիցն է դնացել, որդին տանուտերի, Մելիք-Բաղալի և մի քանի պատուելի իշխանների. բայց ոչ մինը կայ և ոչ միւսը:

Նոքա ամենքը հաւաքուած էին Մելիք-Բաղալի մօտ կարևոր խորհրդի: Առաջիկայ տանուտերական ընտրութեան համար էին նոքա մտածում: Յանկանում էին ընտրել մի մարդ, որ կարողանար ազատել գիւղը ներքին և արտաքին ցեցերից:

Այս մարդը կար, մեզ ծանօթ Արտեմ Սէրգէյիչը կարող էր չարիքների յառաջն առնել, իսկ նա հեռու էր, Նախիջևանի կողմերումն էր: Նրան էին դիմել սրանք գրաւոր և նրանից եկած պատասխանը լսելու համար էին ժողովուել:

Շատ չէին հաւաքուածները, Մելիք-Բաղալն էր նախագահի դեր կատարում, տանուտեր Վարսպետն էր, որին մի կերպ քարշ էին տուել, ամենքից յարգուած Ղազար-բիձէն էր, հին երեցփոխ Նաւօն և Ժամահար Սուքիասի Թոռն՝ երիտասարդ Սիսակը:

Վերջինս բնիկ Ծ. գիւղացի էր. սա էր միակ օրինաւոր գրագէտը: Սրան էր միշտ ակնարկում գրագիր Վանեցին, սրանից միայն միշտ երկիւղի մէջ էր. վաղուց չէր, որ Սիսակը վերադարձել էր Ծ. գիւղը Գէորգեան ձեմարանից՝ աչքերի հիւանդութեան պատճառով:

Մինչև այս նորատի երիտասարդի գալը, գրագիր Վանեցին անարգել գործ էր դնում իւր սուր գլխից, բայց այնուհետև շատ տեղ, ինչպէս ասած է, խոփը քարին էր հանդիպում: Սիսակը միշտ պաշտպան էր հանդիսանում գիւղական և հասարակական շահերին: Նա ինքն էր, որ ծնեցրեց ժողովրդի մտքումը Արտեմ Սէրգէյիչին վերնտրելու, ինքը սկսեց նամակներով հաճեցնել Գովհակերեանցին ձեռք քաշել Նախիջևանու կողմերի սահմանապահ զազախներին զարի և ցորեն մատակարարելու շահաւետ պաշտօնից և գալ հայրենի գիւղը կորստից փրկելու:

Սիսակը դիմադրեց Մենիկովի մի փնասակար նպատակին: Վերջինս իւր հեռու ձգուումների համար համախօսական էր առել Ծ. գիւղացիներից բանալու այնտեղ մի հաստատութիւն, որը միանգամայն փնասակար էր գիւղի ներկայ և ապագայ սերնդին: Սի-

սակը բաց արեց իւր հայրենակիցների աչքերը, հասկացրեց ժողովրդին Բալասան աղայի դիտաւորութիւնները և գլուխ եկած գործը խալառ խափանեց:

Սիսակի նշանակութիւնը և ապագայում կատարելիք դերը քաջ հասկանում էր միայն դրադիր Վանեցին. նա Սիսակի բարոյական ազդեցութիւնից՝ իւր և իւր նմանների կործանումն էր զուշակում: Այս բանը նա Բալասան աղայից շատ շուտ էր հասկացել և ինքն առաջինը Մելնիկովի աչքերը բաց արեց:

Միևթարականը Վանեցու համար այն էր, որ Սիսակին չէր յաջողում շարունակ իւր ցանած սերմերը կանաչած տեսնել. գիւղացիք եթէ սրտանց համակրում էլ էին իւրեանց միջից դուրս եկած մի մարդի՝ բայց արժանի յարգանքը չէին տալիս:

—Այա՛, Խէ՛օ՛, տեղիցդ կաննի՛, գտակդ հանիր գլո՛ւխ տուր, տեսնում չե՞ս Սիսակ աղէն ա, աչքով ցոյց տալով ընկերին ծաղրում էր խեղճին մինը:

—Ա՛յ գլխամեռ, կամաց խօսի՛ր, մարդը չինոյնիկ ա, թագաւորական շիջից դուս եկած ա, տեսնում չե՞ս չները կողքիցը քաշ ա. էգուց էլօր, ասում են, նաչալնիկի դիվանխանումը սեկլետար ա դառնալու:

—Քեամուլ ա էլել մարդը՝ (կապուշեւագործուել), ո՛ւմնից ա պակաս, ասում են սա Բալասան աղիցը շատ չին ունի:

—Բաս տեսել չե՞ս, պալտօնի տակին թրի վրայ քաշ ա արած, ֆարաղիմ (դիպուս) մարդը չի ուզում իր գլուխը ցոյց տալ, խոնարհութիւն ա բանացնում, թագցնում ա. թէ չէք հաւատում՝ Վանեցի վարժապետին հարցրէք:

—Աւատաս սա մեր վարժապետի պաշտօնը խլի ա՛յ, պիսըլութիւն էլ լաւ կանի:

—Մնիսէ՛լք, պիսըլութիւնն ու դեղի վարժապետութիւնն ի՛նչ բան ա, որ Սիսակ աղէն վայել համարի, մարդը մի քանի օրից հանելու ա իր մեծ Սուքօ պապի խաղինէն ու Բալասան աղի պէս գեղի վրայ ցրուի, զեղն իրան ճորտ գրի:

Նւ յանդուգն երիտասարդները ծաղրում էին խեղճ տղային և ետևիցը հռհռալով ծիծաղում:

Լսում էր այս ամեն սառն արհամարհանքները Սիսակը և չէր

նեղանում. նա քաջ ուսումնասիրել էր տղետ զիւղացւոց թոյլ կողմը և աշխատում էր չարիքը արմատից կորզել և այդ փոքր առ փոքր իրեն յաջողում էր:

Սիսակը զիմել էր հրապարակասանների և գրքեր հրատարակողների և խնդրել էր գրքեր ու լրագիրներ:

Սկզբումը դեռ փախչում էին ամենքն այդ բաներից, բայց հետզհետեւ ընտելացան. շատերն իրենք զիմում էին Սիսակին և խնդրում կարդալ իւրեանց համար նորութիւններ. գրագէտները մինչև անգամ վերցնում էին նրանից և իւրեանք կարդում:

Գրագիր Վանեցին տեսնում էր այս և իւր գլուխը կոծում:

Սակաւ առ սակաւ Սիսակի մտքերը թափանցեցին ժողովրդի բարձր դասակարգի մէջ ևս. խօսքս զիւղի առաջաւորների մասին է:

Այս երեկոցեան Մելիքի տան ժողովն էլ Սիսակի նախաձեռնութեամբն էր եղած:

Երեք անգամ Սամփսոնը բաղխեց այս երեկոյ Մելիք-Բաղալենց դուռը և երեք անգամն էլ ինքը Մելիքը նրան մի մի սրախօսութիւնով ճանապարհ դրեց:

— Աղա՛, ի՞նչ ա փողոյ կատու մտել, ա՛յ Սամփսոն, ասաց Գալափունի տղին Մելիք-Բաղալը, երբ նա երրորդ անգամ գալով՝ լեզուն հանած՝ աղաչում էր շտապել, նշանը շուտ տանել. սպասեցէք, մի քիչ հաշիւ ունինք, վերջացնենք ու էս ա գալիս ենք, առանց ինձ, առանց տանուտէրի ու իշխանների հօ չէ՞ք կարող նշան տանել, բոլորն էլ ինձ մօտ են: Դո՛ւ զիտես, կուզէ՞ք՝ գնացէք առանց մեզ նշանը տարէք, վայն եկել ա քեզ տարել, էլ հարսանիքիդ կառավարիչ (Խաճապար) չեմ դառնալ, ձէթ մարդկանց ձեռը կընկնես, լաւ քէ՛՛՛ չի ընիլ, նշանածդ կը խռովի՝ քացով կը տայ:

— Քանի քո շունչը ղնդիդ ծէրին ա, բիձա ջա՛ն, նամարդ (սխալ) կըլին քեզնից սավահի ուրիշ կառավարիչ ջոկողը:

— Դէ գնա՛, էս ա պրծնում ենք:

Թո՛ղ մի փոքր Սամփսոնի նշանն ուշանայ, մենք հետեւինք Մելիք-Բաղալի տան ժողովին:

Դռները ներսից պինդ փակուած են, Մելիքի որդին ախանջը ձայնի ուրիշ սենեկում հսկում է: Նա երկու անգամ հեռացրել է և տուն չի թողել Բալասան աղայից եկող բանբերին: Այդ Մելնիկովի

քեռորդի վասալն էր, որ իւր քեռու կողմից եկել Մելիքին կանչում էր, բայց երկու անգամն էլ պատասխան տուցաւ՝ թէ գլխի սաստիկ ցաւից անկողին է մտել և քունը տարել է:

— Բա՛ տանուտէրի, Ղազար-բիձի ու երեցփոխ Նաւոյի տեղն էլ չը գիտե՞ս, քեռիս նրանց էլ էր ուզում, ասաց Վասակը. զնալով գալով հոգահա՛ն էլայ, իրանց տներումը չեն, ասում են՝ ձեզ մօտ են:

— Մեզ մօտ ոչ ով չը կայ, կտրական արեց Մելիքի որդին:

— Բաս էն ի՞նչ ճրագի շառաւիղ ա, որ հօրդ օթալի դրան արանքիցն երեւում ա, թէ որ հէրդ քնած ա, էլ ճրագն ընչի՞ ա վառ:

— Մէրս ա ման գալիս:

Վասակը շատ աշխատեց մի հնարքով Մելիքի դրանը մօտենալ, բայց Մելիքի որդին շարունակ խափան գտնուեց նրա ցանկութեանը: Զգտում էր Վասակը մի հնարքով ներսից ձայներ, գոնէ, լսել, բայց Մելիք-Բաղալի շան հաչոցից ոչինչ չէր լսուում:

— Ինքը սուդիա Խուդօն ա եկել, ասում ա՝ հօրդ զարթնացրու, ներս մտաւ միւս սենեկով Մելիքի որդին և յայտնեց հօրը. բայց պատուէր ստացաւ տուն չը թողնել և ասել, որ տաքութեան մէջ ուշքը կորցրած քնած է, մայրը թոյլ չի տալիս անհանգիստ անել հիւանդին:

Խուդօն էլ ձեռնունայն վերադարձաւ:

— Խորովածի հոտ ա առել, մեր տղէ՛ք, ասաց Մելիքն իւր խորհրդակիցներին, բայց թէ մեր գլխինը գտակ ա ու լաչակ չի, պէտք ա դրա քնթի տակին մի բրդոտ էշ խանձենք:

— Ի՛նչ են քամակներիցս ընկել, ուզում են տանին յիմարացնեն ու Խուդօյի համար քար քցել տա՛ն, զգուանք յայտնեց Նաւօն:

— Մեր աչքն էլ են հանում, աղպէ՛ր, շեշտեց Մելիքը, աղուէսը մարագումը ձագ ա հանել՝ մեր թագու հզութիւնիցն ա. ծառը գանգատ գնաց Աստծու մօտ կացնի ձեռիցը, որ իրան կտրում ա, ասեց՝ կոթը քեզանից ա. մենք որ մի խօսքի ընինք, իրար տակ չը փորենք, իրարից չուղուլութիւն (չափաւէիւն) չանենք, Զաղացպանենց Բալօն մեզ ի՛նչ կարող ա անել:

— Ի՛նչ չի կարող, Մելիք-Բաղա՛լ, պատասխանեց Ղազար-բիձէն, մարդս հինգ—տասը շահի ենք պարտք առել՝ ճուտեր ա հանել, մեր վրայ պառկել, տակիցը դուս չենք կարում գալ, մեղաւոր սև

երեսի պէս լիզուըներս կարճ ա, առաջին գլխներս ծռում ենք. էգուց էլօր ունեցած չունեցածներս տօկի (աճաւոյ) կը կապի, կը ծախի:

—Էդքանով որ բաւականանայ՝ գլուխը քարը, կը դիմանանք, բայց դէ գեղումս բան կ'այ, որ էդ անիրաւ որդամեւի մատը խառը չըլնի. ըսկի տեղեկա՞նում էք, թէ մեր ջահէլ-ջուհուներին ո՞վ ա փչացրել. ո՞ւմ մարագը կրակուել ա, ո՞ւմ բաղերը կոտորուել են, ո՞ւմ տունը կտրուել ա՝ պոյը դրա տակին ա. ձեզ քաջ յայտնի ա, որ մեր գեղի սարսափ ջահէլների գլուխը դրա քուեր տղայ Վասակն ա, պահող, պարտակողն էլ մեր բարեհոգի Խուռն—գեղիս արդար դատաւորը. նա մէջ տեղից հալալ բաժին ա անում, կէսը մեր փչերին ա տալիս, մէկէլ կիսիցն էլ իր բաժինը վերցնում ա, միւսը զրկում քաղաք՝ տնաքանդ Բալասան աղի տունը:

—Գեռ մենք ողորմութիւն ենք, պարոններ, խօսեց Սիսակը, միւս գիւղերն իսպառ աւերել է, մեզանից որքան և իցէ քաշուում է, իբրև հայրենակիցներ՝ մենք տեղեակ ենք իւր անցեալին, ուրիշ գիւղերում միանգամայն չափից անց է կացնում:

—Ի հարկէ իրան յայտնի ա, որ մենք իր օխտը պորտը գիտենք. դրա հէրն երեկ մէկէլ օրը չէ՞ր, որ Երևան Խօջենց ջաղացի չամբը լիզելով հոգին դուս էլաւ, գլուխը շարժեց Նաւօն:

—Էն օրը Գառնու գլաֆնին արին էր լալիս, ասում ա բերել ա Զօլախ-Յարութիւնին՝ պապէր'նի (Հաւասարհասար) ա շինել, բաց թողել մեր ջանին. ո՛չ բաղերումս ա հաւող թողում, ոչ ղնգերումս չալթուկ, օրը տասի հացն ա կտրում:

—Էդ տնաքանդն ընչանք Գառնու մհալն էլ ա դունչը հասցրե՞լ:

—Էդ թո՛ղ, Սիսա՛կ, դու մեր ցաւը հոգա՛, Գալ-ափուն հինգ հեռ մարդ ա զրկել. դու էս ասա՝ ի՞նչ գիր ես ստացել մեր Արտօյից, պտի գայ որ գլաֆնի ընտրենք իրա՞ն, թէ ոչ. էս բիբօրին (Ընտրութեան) թէ նա դուս չեկաւ, գեղը հողեց հողի կը կորչի:

—Պ. Յարութիւն Գոմշակերեանցն ինձ գրում է, պատասխանեց Սիսակը Մելիք-Բաղալին, որ ինքը թէև միտք չունի միանգամայն յանձն առնելու, բայց զիջանելով ա՛մբողջ գիւղականաց խնդրանացը՝ այն պայմանաւ միայն կը դայ, եթէ գիւղացիք միահաւան թուղթ տան նաչալնիկին՝ առանց քուէարկութեան ընտրել իրեն տանուէր.

իսկ եթէ նաչալնիկն օրէնքի վերայ հիմնուած չլ չամաճայնի, այն ժամանակ միայն քուէի դնեն իւր անունը:

—Ատուած իր որդիքը պահի, ա՛ղպէր, ես իմ հոգի՛ն՝ էլի լաւ մարդ ա, որ մեր խաթրը պահեց. մենք էլ տունը մինը կայ՝ կը գնանք, հինգը կայ՝ կը գնանք ու սխալտակ կը քցենք:

—Դէ հիմի վեր կացէ՛ք գնանք մեր Գալ-ափունի տղի շինքը կարմիր նոխտայ կապենք, նշան դնենք, ասաց Մելիք-Բադալը, երբ Սիսակը թուղթը գրեց վերջացրեց և ներկայ եղողները ստորագրեցին:

Միւս օրն երկու թերթ էր գիւղամիջին ձեռքէ ձեռք անցնում. մէկը մեզ ծանօթ ստորագրութիւնն էր՝ Արտէմ Սերգէյիչի համար, միւսը Խուդայի օգտին էր:

Եթէ երկու թերթն էլ դիտէիր, շատ միւկնոյն անուններ կը գտնէիր երկուսի մէջ էլ ստորագրած:

Երկու տեղ ստորագրողներից մի քանիսին մենք ճանաչում ենք. Վլադիմիր Նեստորիչի երեկոյեան խօսակիցներն էին նոքա:

Վերջին թերթի մէջ շատ ձեռքեր միանմանութիւն ունէին. քաջավարժ աչքը միայն կարող էր պնդել, թէ այդ ամենը մի մարդու ձեռքով յերկրած կեղծ ստորագրութիւններ են:

Այդպիսի քաջագործութիւններ առաջինը չէր, որ կատարում էր գիւղական գրագիր Վանեցին:

ԺԴ.

Կ Ր Ա Կ.

Գալ-ափունի հիւրերը բոլորը ժողովել են. Մելիք-Բադալն իւր մօտ հաւաքուած իշխանների հետ բազմել է վերի կողմը, մի մի կթղայ օղի և մի քանի հատ չամիչ էլ վայելել են, բայց հիմա ինքը Գալ-ափուն ուշացաւ:

Այս երրորդ անգամն է, որ Խլղաթենց տէր Սուքիասի քամակիցն են ուղարկել և նա չի գալիս, իսկ առանց տէրտէրի նշան դնել մի ժամանակ կարելի էր, բայց 15—20 տարի ա, որ Հոգևոր տիրոջ հրամանովը նշան եղած տեղը քահանայ պէտք է գտնուէր նշան օրհնելու՝ Հայոց հին ծիսին համաձայն:

Գալ-ափուն ստիպուել է ինքն անձամբ գնալ քահանային կան-

չելու, բայց ամենքի համբերութեանն էլ չափ ու սահման կար, հրաւիրուածներն սկսեցին նեղանալ և Գալ-ափունի վերայ տրտնջալ:

—Տօ՛, մեղրի պուլիկը լպտող Սամփսո՛ն, վատ հոգէա-
ռի պէս թողիր էլ ոչ, թէ մեղքներս խոստովանուինք, պարզ-
երես գնանք դրախտի դուռը ծծենք. ընչանք գնացիր եկար՝ խոր-
հուրդներս կիսատ թողիր. լեզուդ կէս զազ կախ էիր քցել մղկտում,
թէ եկէք նշանը դրէք, որ ինձ տուն քցեմ, բաս ո՛ւր ա քո Շահի
թամբալ (ծոյլ) հէրը, ի՞նչ ա գնացել չանէն (ծնօթ) կախ քցել ու
տէրտէրի հետ Աշուղ-Ղարիբի առականներն սկսել, դէ գնա՛ կանչի է՛.
ձայն տուեց Մելիք-Բադալը:

—Երեք հետ եմ գնացել, բիձա ջա՛ն, հրէս մին էլ եմ վազում:
Սամփսոնի գնալուն կարիք չը ֆնաց, Գալ-ափուն ինքը տուն
մտաւ թթուած, քացախած:

—Ադա՛, չորս ոտանոնց հրեշտա՛կ, Գալ-ափո՛ւ, իւր ձեով հարց-
րեց Մելիքը, դու դալլաք (սոփիէ) Զաքօն ե՞ս, որ հարսանիքն ի-
րանց տանը թողել ա, գնացել ուրիշի տանը հացի նստել. ի՞նչ ես
Նոյեան ագռաւի նման լէշով (գէշ) ընկել, ի՞նչ էլաւ տէրտէրը, դէ՛
պրծէ՛ք՝ գնանք է՛:

—Իմ աչքի լոյս թանկագին ղօնաղներ՝ (հիւրեր), կը բաշխէք, որ
ձեզ նեղութիւն տուի, ասաց յանկարծ Գալ-ափուն սաստիկ յուսա-
հատ ձայնով, ամենքդ վեր կացէ՛ք, գնացէ՛ք ձեր տները, ես է՛լ
նշան գնելու որդի չունիմ:

Բոլորը սառեցին, քար կտրուեցին, բայց Մելիք-Բադալն սկսեց.
—ա՛դա, ա՛յ մեռած, շատ գինոյներիցն էլ չես, թէ ասեմ՝ գնացել ես,
գլուխդ կոխել գինու կարասի մէջ, ծծել, կատարդ տաքացրել, խելքդ
կորցրել. էդ ընչե՞ր ես դուս տալիս, տէրտէրն ի՞նչ էլաւ:

—Ի՞նչ տէրտէր, աղպէ՛ր, տէրտէրն իմ ընչի՞ն ա պէտք, երե-
ւում ա՛ ես թուրք եմ, որ չհաս աղջիկ եմ ուզում տղիս:

—Ադա՛, ի՞նչ ես ձաւար անում (ցնորաբանել):

—Ա՛յ մարդիկ, ամենդ էլ էս գեղիցն էք, էս նշանի մէջ չհա-
սութիւն կա՞յ:

—Տօ՛ տխմա՛ր, գեղն արմացած ֆնացել ա, որ էս տարի մի
պսակ պէտք ա ըլնի, որի մէջ չհաս չը կայ. քանի մեր Խլլաթի
ղարմ երէցը գինի արաղ ծախիլը թողեց, փիլոն ծածկեց, հասն էլ

դժուեց, հաւասարուեց, չհասն էլ. հիմի դու ի՞նչ ես գլխիդդ դուստայիս:

— Դէ՛, ա՛յ հընկեր հարեւաններ, մի մին քար վեր կալէ՛ք, գըլխիս քցեցէ՛ք, ինձ տնով, տեղով կրակը դրէ՛ք, էրեցէ՛ք, որ ձեր հայքիս տոնէութիւնի հիմքը շուռ եմ տալիս, տղիս համար չհաս աղջիկ եմ ուզում:

— Ախար ի՞նչ կայ է՛:

— Ձեզ զուրբա՛ն, լսեցէ՛ք ու ինձ քարով քարկոծեցէ՛ք: Դէ՛, կարգ ա, ասում ա՝ ոչ հէր անմեռ, ոչ որդի անպսակ, աչքիս սև ու սիպտակն էդ մի երեխէն ա — Սամփսոնս ա, աչքս ջուր կտրուեց լէնքս ու երկէնքին մտիկ տալով. Աստուած ձերն էլ պահի, չունեցողին էլ ինքը տա՛յ՝ ուրախացնի. մտքներումս դրինք էս ձմեռ տընաւորենք, մենք էլ հարսնատէր դառնանք: Հալըա՛թ, Աստու իր կամքն էր, որ մեր Ալէքենց Բարսեղի նշանածի (է՛հ) հետ մեր տանտիկինը (է-բէ Կէ՛ն) ամառու բաղումը՝ ծառի հովումը քաղցր զըրիցների մէջ խօսք էին տուել, խօսք առել: Դէ՛ լաւ ու վատս ո՛րն ա, Բարսեղի աղջկանը մի տղայ էր պէտք, իմ տղին էլ՝ մի աղջիկ. ես էլ, Բարսեղն էլ կամք տուինք (հաճախե՛լ) ու ասացինք՝ Աստուած շնհա՛ւոր անի: Բայց, դէ՛, բան ու գործի խառը ժամանակն ո՛վ պտի նշան դնէր, ասացինք՝ քարը վերցնենք՝ քարի տակը դրենք (ծածկե՛լ), աշխարհքովս մին չանենք, բաղաբանից, հանդաբանից պրծնենք, նշան դնենք, պսակենք:

— Էս ժամանակին թագուն բան կը մնա՞յ, ասացին այս ու այն կողմից, երկո՛ւ օրից ձէնը վեր էլաւ:

— Դէ՛, ի՞նչ անենք, թէ վեր էլաւ, գողութիւն հօ չէի՞նք արել, բայց դուք բանը լսեցէ՛ք: Մի օր մեր մեծ երէցը ծիծաղելով ինձ ասում ա. Գալ-ափո՛ւ, շոր ա Ֆ (դա՛հաճ) ունիս, տղիդ աղջիկ ես ուզել, ինձ չես հարցրել:

— Է՛...

— Աղի՛դ մեռնիմ, ասում եմ, առանց քեզ ո՞նց կը լինի, էգուց էլօր քո սուրբ օրհնութիւնով կը նշանենք, ամենքն էլ կ'իմանան:

— Ձէ՛, ասում ա, դու մտքումդ դրիր թէ չէ, իմ ծուխն ես, պտի դայիր ինձ հարցնէիր. երբ որ ես խորհուրդ կը տեսնէի, կամ ինքս իմ ոտովս կ'երթայի խնամախօս, կամ ուրիշին կը զրկէի:

—Կարգիդ կապուած ըլնիմ, տէրտէր ջա՛ն, ասում եմ՝ թէ ես տեղեակ էլած կամ, մէրերն իրանք են ծառի հովումը տուել ու առել:

—Ես խաբար չեմ, կպել ա՛ մեծ շորափ կայ շինքիդ:

—Դու ողջ կենա՛ս, ասում եմ, ինչ որ քո քէֆն ա՛ (յառնիմսս) հրամանիդ կանգնած եմ:

—Կապուտ շապկաւորն, ասում ա, իր ոտովը պտի գայ մեր տունը:

—Քո ցա՛ւը տանի, տէրտէր ջա՛ն, ասում եմ, աշխարհքի ծախս ա գնալու, մի գլուխ շաքարն էլ դո՛ւ անուշ արա, հալբա՛թ, Աստուածդ միտդ կը բերես, մի օր մեզ մի թաս չայ կը խմացնես: Բայց, տէրտէր ջա՛ն, ասում եմ, էդ քո կապուտ շապկաւորը, կամ ուղիղն ասենք՝ մի գլուխ կապուտ թղթով փաթաթած շաքարը դու չհաս տեղիցն ես վերցնում. ես ընչի՞ պտի ղրկեմ, փառք Աստուծու մէջը չհասա՛մ հաս չը կայ:

—Թարջիման (սուգոն) ունիս, ասում ա, լաւ իմացիր, որ ընչանք կապուտ շապկաւորը՝ հետն էլ մի գրուանքայ իր սիրեկանիցը (Լէյ) կապած, փէշատած, ծերիցն էլ արճիճը կախ ընկած՝ մեր շեմքովը ներս չը գան՝ ես ո՛չ քո տունը ոտ կը կոխեմ, ոչ նըշանդ կ'օրհնեմ, ոչ կը պսակեմ:

—Տէրտէր ջա՛ն, ասում եմ, շատ լաւ ես հրամանք անում, ղրկեմ՝ ղրկեմ՝ բայց մեղքս դեռ չլնքիս դիր, յետոյ ծանր ապաշխարանքն էլ միջքիս բարձի:

—Դու, ասում ա՛ էդ աղջկանն ուզելով՝ իմ տանիցը մի Քրդի կարմիր կարպետ խլեցիր:

—Կարգիդ մատա՛ղ, ասում եմ, ի՞նչ կարպետ, մեր տանը Քրդի կարպետ չը կայ, մենք կարպետներ ունինք՝ բայց բոլորը Թարաքեամի են՝ Երևանայ բազարումն առած:

—Ախմա՛խ, ասում ա, դէ՛, տեսնո՛ւմ ես, որ տաւարի հրեշտակութիւնից—ղասաբութիւնից աւելի գլուխդ ոչինչ բանից չի դուս գալիս, Քրդի կարպետ՝ հարիւր մանէթանոց թուղթ փողի անունն ա:

—Ա՛յ տէրտէր, ասում եմ, հայ-քրիստոնէի տանը 100 մանէթն ի՞նչ բան ունի, ես սովդաքեա՛ր եմ, վաճառակա՛ն եմ, բամբակիս հակները Թիֆլի՞զ ա հասել, արաղիս բեռները Ջալալօղլի՛ն ա անց կացել, որ 100 մանէթի երես տեսած ըլնիմ. մենք մեր էլած չէլածը

մեր դրանք ծախում ենք, մեր ցաւը քաշում, վախտ վախտ էլ մի ոչխարի, կամ տաւարի գլուխ ենք կտրում, նիսիա (սպասի) բաժանում, միջիցը մի երկու շամփուր խորովածացու աշխատում, Աստծուն փառք տալիս:

— Զանաքը մի կողմը կենաց, ասում է՝ Գալ-ափո՛ւ, դու ինձ հարկւր մանէթ մնաս տուիր. տասը տեղից Բարսեղի աղջկանն ուզում էին, տասն էլ չհաս էր, մէջ տեղն էլ իմ ջէքն էր լցուում. դու ո՞ր տեղից ներս մտար, հաս տեղից աղջիկ ուզեցիր, որ ինձ մի կոպէկ օգուտ չը լինի: Եդ ամենն էլ ոչինչ, դու իմ տունը քանդեցիր, իմ բարեկամի ու բարերարի մօտ սևերես արիր:

— Ի՞նչ բարեկամ—բարերար, հարցնում եմ:

— Բալասան աղի:

Լսողները միանգամից անմիջապէս ցնցուեցան, սարսափն ու սառը քրտինքը մեծ ու փոքրին պաշարեց. մինչև հիմա Գալօյի պատմութիւնը կատակ էր թուում, կամ, շա՛տ, շա՛տ՝ քահանայի շահասիրութեան և չարութեան հետևանք, այժմ գործի ծանրութիւնն ինքն ըստ ինքեան բացատրուեցաւ:

— Խօսքդ շարունակի՛, երկար շշուկից յետոյ առաջարկեց Մեղիք-Բաղալը:

— Ո՞նց թէ Բալասան աղին վրէժ բարկացրել եմ, ա՛յ երէց, շփոթուած հարցրի ես, կցեց նորից Գալուն իւր երկար պատմութիւնը:

— Բալասան աղի կամքն ա, ասեց՝ որ Բարսեղի աղջկանն ուրիշ համար ուզի, մի շաբաթ յառաջ ինձ կանչել էր՝ գնացի. հրամայեց, թէ փիլոնդ ծալի գործակալին ղրկի՛ր, թէ որ դու Պետրոսենց Գալօյի տղի նշանն օրհնել ես:

— Յետոյ, տէրտէր ջա՛ն, ասում եմ, հիմի ի՞նչ ես հրամայում, մենք գնանք ո՞ր ջուրն ընկնենք:

— Ոչի՛նչ, ասաց, մազաչափ էլ ա բանի տեղ մի՛ դնիլ, Բալասան աղի ասածը շատ ա չհաս. ինքն իր աղաջ տեղովն օրն օխտն անգամ էլ եթէ վանքի խցերը տուն ու դուս անի, շեմքերը մաշի, գլուխ չի կարող բերիլ. ինչպէս քեզ ասում եմ, դու մի գլուխ շաքար, մի գրուանքայ չայ մեր տունը ղրկի՛, բոլորի բերանն էլ ցլիլն իմ բանն ա, դեռ Բալասան աղէն իրան ա տեսել, դեռ իմ սատանութիւնից տեղեակ չի. ուզենամ՝ թէ չէ հէնց կլխկոնձի տալ տամ,

որ փոսն ընկած ձիու պէս թափահարուի, օձի պէս կուտապ կուտապ անի ու թաղուի մնայ, իրա հէ՛րն եմ օրհնել. խաթրն եմ պահում, ինձ պէտք է գալիս՝ սիրտը շահում եմ, թէ չէ երկ' օրումն իժ օձի պէս հէնց կը շանթեմ, որ ձէնը երկինքը կը հասնի, ինձ Խլղաթենց մենծ տէր Սուքիաս կասեն:

—Ի՞նչ պտի անէի, ա'ղպէր, ձեզ եմ հարցնում, սուտ էր ասո՞ւմ, քիչ տուն ա քանդե՞լ. միտք արի, միտք արի ու նշանի քաղցրեղէնի հետ՝ մի գլխի տեղակ' երկու գլուխ շաքար առայ ու մի գրուանքայ կապած, փէշատը կախ չալի հետ, Սամփսոնիս ձեռքովն իրան զրկեցի:

—Ուրախ ուրախ վերցրել էր չայ-շաքարը, շարունակեց Գալօն, Սամփսոնիս հետ էլ բաւական հանաքներ էր արել, նշանը մի հէնց հաստատ պտի քցեմ քո ու նշանածիդ շլինքը, ասել էր՝ որ օխտը լուծ գոմէշը չը կարենայ յետ պոկել: Մենք էլ մեզ համար ապահովացանք, խնամոնց հետ խօսացինք, էս իրիկուն նշանի հոգսը քաշեցինք, շնորհակա՛լ եմ, դուք էլ եկել էք մեզ պատուելու: Դեռ կանչուածները նոր էին հաւաքուում, Սամփսոնիս զրկեցի տէրտէրի ետեւից: Դուռը ծեծում ա ու ձէն տալիս. ինքը ձէնը ճանանչում ա ու տղին հրամայում, թէ ասա՝ տանը չի: Դու մի՛ ասիլ, Սամփսոնս հեռուից տեսած ա ըլնում, որ տէրտէրը Բալասան աղենց տանիցը դուս եկաւ ու իր առաջն ընկած՝ գնում ա: Էլ չի ուզում վաղի քամակիցը հասնի, թողում ա՝ մինչեւ տուն ա մտնում:

—Ո՞նց թէ տանը չի, պատասխան ա տալիս Սամփսոնս, հէնց հիմի Բալասան աղենց տանից դուս եկաւ ու իմ աչքի առաջին եկաւ տուն մտաւ:

—Արի՛, Սամփսո՛ն, արի՛, հանաք եմ անում, ձէն ա տալիս տէրտէրը ներսից. եղպէս կը վախացնեմ, լեղիդ ջուր կը շինեմ ա՛յ: Դու գնա՛, հրամայում ա, ես էլ հրոպպէ չի քաշիլ՝ էն տեղ եմ:

—Ի՞նչ կասես, Մելի՛ք, բոլորը հաւաքուեցին, մնացիք դուք՝ մի քանի իշխաններդ ու տէրտէրը. խեղճ Սամփսոնս տէրտէրից ձեզ էր վազում՝ ձեզանից տէրտէրին: Վերջը որ դուք ասել էիք, թէ հէնց հիմի գալիս ենք, համբերութիւնս հատաւ, ինքս վերկացայ, գնացի դպա երէցն ու առանց դուռը ծեծելու՝ թո՛ւշ տուն մտայ: Ի՞նչ էք ասում, աղպէ՛ր, մի քարափ շուռ անցաւ, թէ մի կայծակի ամպ

էր՝ տրաքուեց դա իմ գլխին. չը թողեց, թէ բերան բաց անեմ, օրհնեալ ի տէր ասեմ, ձէնը դադաթն առաւ ու աշխարհքի լափը գլխիս ածեց. — Ի՞նչ էք ինձ անհանգիստ անում, ձեր հէրն է՛լ, ձեր տէրտէրինն է՛լ, ես էլ քո տան քահանէն չեմ, գնա՛ տէր Մարկոսին տար:

— Կարգիդ մեռնեմ՝, ասում եմ, ախար էն վաղ էր, որ ծուխ ու մուխ չը կար, տէրտէրների միջին սէր, խաղաղութիւն կար, իրար հաւատալ կար, մի սև փողը հաւասար աղպէրաբաժին կ'անէին. քո ձեռնադրուելուց դէսն էն բաներն ո՛վ ա տեսել. իմ ու քո էք արել, մեզ հայկանների պէս միջներիդ բաժին էք արել, անումներս ծուխ էք դրել ու կարգին էլ չէք հովուում. առաջ պատահած ժամանակը՝ ո՛ր տէրտէրին գնում էինք, ձեռաց հասնում էր, հարամներս հալալում, նեղացածին օրէնք հասցնում (Կողբոյեալ), հիմի հէնց օր ա ըլնում, որ եթէ ծխատէր քահանէն գեղումը չի գտնուում, մէկէլդ չէք էլ ուզում տեղից շարժուիլ. հիմի էս կէս գիշերին ես ո՛ւմ ոտը գնամ, ո՛ր տէրտէրը կը համարձակուի իմ հարկը կատարել:

— Զէ՛, ասում ա, Գալո՛, չէ՛, քանի շանը բաց չեմ թողել, քեզ զգգիլ տուել, համով, յարգւորով (պարտով) վեր կաց քաշուի:

— Տէրտէր Զա՛ն, ասում եմ, ախար ընչի՞, ի՞նչ սհաթ անցկացաւ, որ փոխուեցիր, էն օրը դու ինձանից չայ-շաքար ուղեցիր՝ առաջ ու զրկեցի, էլ ի՞նչ անեմ:

— Մի շատ մեծ բան էլ չես արել, ասում ա՝ միջքիդ զօռ ա հասե՛լ, որ 25 տարի ա՝ քո տանու քահանէն եմ, մի գլուխ շաքար ես զրկել. հարիւր հետ հօրդ գերեզմանն օրհնել եմ, տուածդ մի մի ապասի ա էլել, շաքարն էլ նրանց հաշուում դուս արի:

— Դէ, տէրտէր Զա՛ն, ասում եմ, իմ ուժս էնքան ա պատել, էն եմ տուել, գեղըցու ապասին քաղքցու մանէթից թանդ ա:

— Շատ չեն դուս տալ, ասում ա՝ ես քո նշանն օրհնողը չեմ, մէջը չհասութիւն կայ, էգուց կը տանեն, միւրքիս ձարերը (ճալ) մի մին կը քաղեն:

— Ի՞նչ չհասութիւն, ի՞նչ ա գլխիցը դուս տուել, բարձրագոյ աղաղակ վեր ելաւ բազմականների միջից:

— Ես էլ ձեզ պէս էդ խօսքի վրայ քար կտրուեցի, սառած մնացի, շարունակեց Գալօն. ոտի՛դ մատաղ, տէրտէ՛ր, հարցնում եմ, ի՞նչ չհասութիւն կայ:

—Էդ մենք կը պարզենք, ասում ա՛ երբ բանը տեղը կ'ընկնի, դեռ էլի ուրիշ արդելքներ կան, որ ժամանակին կ'ասենք. վերջապէս, ասում ա, Գալո՛, դու է՛լ հացակեր ես, էն օրն ես քեզ ցերեկի պէս պարզ յայտնեցի, որ իմ բարերարս Բարսեղի աղջկայ համար ուրիշ մտքի ա, դու անմեղ տեղը ծախսի ու խարջի տակ մի՛ ընկնիլ, էն աղջիկը քո Սամիսոնի կնիկը չի կարող դառնալ, ականջիդ բուրդը հանի՛ր: Հիմի էլ բարեկամաբար ես քեզ հասկացնում եմ, որ Բալասան աղի մի դատարկ հրամանը ձեր ողջ գեղի հետ ինձ համար հաւասար ա. թէկուզ որ էս օր ասի՝ փիլոնդ վէր դի՛ր, մտի՛ մէհիդը՝ անխօս կերթամ, ալլահ ու ահպեար կանեմ, միտքդ ի՞նչ ա, ես կարամ նրա հրամանը գետինը քցի՞լ, ինձ հրամայած ա ասել՝ չհաս ա՛ ես էլ մինչև Հոգևոր տիրոջ ոտքը չհաս գողալով պէտք է գնամ:

—Ա՛յ, կապուած ըլի նա իր անտօնական կարգին, ինչքան նա հաս ու չհաս ա հարցնում, ընդհատեց Մելիք-Բադալը, ա՛յ մարդիկ, դուք ու ձեր Աստուածը, էս գեղումն յառաջ հարիւր պսակից մինը չհաս պատահում է՛ր, ո՞վ առաջինն էդ սովորոյթքը մեր մէջը մըտցրեց, էդ պռճոկուածը չէ՛ր:

—Բաս ո՛ր անիծածն էր, պատասխանեց Սիսակը, մոռացե՛լ էք այն տարուայ 14 չհասները, որ ինքը յորդորեց, ինքը նշանեց, տասնական մանէթ ստացաւ իւր համար, վերջը չհաս հրատարակեց, 14 գլուխ շաքար բարձեց ձիուն՝ տարաւ տեղ հասցրեց ու հրամանը բերեց և ահա այն օրից ցայսօր մեր մէջը կարգ է ընկել՝ օտարին թողած, արենակիցներին ենք վազում:

—Գալ-ափունի ջա՛նն էլ ենք հանում, կատակի տուեց Մելիք-Բադալը, իր քուեր աղջիկն օխտն օրէն ճանապարհ կորցրեց, Կողբումը մարդի տուեց, որ իր մորթոտած տաւարի հետ անփող աղ լպստի ու գեղի ծէսը քանդեց, տղին հաս տեղից աղջիկ ուղեց: Ամենքը ծիծաղեցին, բայց այդ դառը ծիծաղ էր, յուսահատ սրտից արտաժայթբուած մաղձ էր քահանայի ստուերի դէմ:

—Յետո՞յ, յետո՞յ, խօսքդ վերջացրո՛ւ, Գալո՛, ասաց Մելիք-Բադալը, հիմի չի գալիս նշան օրհնելու էլի:

—Գալո՛, ասեց ինձ վերջը, թէ ինձ կը լսես, գնա՛ կանչած զօնաղներիդ մի հնարքով ցանի՛ր, ճամփո՛ւ դիր, Բարսեղի աղջկա-

նից ձեռք քաշի՛ր, թէ չէ գլխիդ շատ խաթաբալէք կը գան, ես քեզ...

— Կրա՛կ, կրա՛կ, աղաղակելով տուն ընկաւ յանկարծ մի երիտասարդ. Գալ-ափո՛ւ, հասիր, գոմդ ու մարագդ էրուում են:

Ամենայն ինչ մոռացուեցաւ, բազմութիւնը լուպէական դուրս թափուեցաւ: Աստուած հեռու տանի, երկինքը շառագունել է, Պետրոսենց Գալօյի գոմի ծածքը բլել է, տաւարի բառաչն ու ձիու խրխինջը լսողի սիրտն է կտրատում, մարագը միանգամայն բոցի մէջ հուրհրատում է: Գիւղումը կուժ ու բղուղ չը մնաց՝ դուրս եկան, բայց օգուտը սակաւ, մարագն ամբողջ այրուեց, քարաշար պատերը մնացին ցցուած, գոմումն էլ հինգ կով իւրեանց հորթերով և մի ձի ծխախեղդ եղան:

— Լաւ նշան չը դրե՞ց, ո՞նց էր, փսփսում էին իրար հետ բազմութեան մէջ խառնուած երկու երիտասարդներ:

— Դէ հիմի թո՛ղ գնաց, իմ նշանածը տանի՛, Վասակ ջա՛ն:

— Քեռուս կեանքն երկար ոլի՛, Կարօ ջա՛ն, նա որ չը հրամայէր, քո հէրդ ի՞նչ կը համարձակէր երկու կուժ նաւթն աղենց գէրուզամբիցը (նիւղ) դուս բերել, մեզ տալ ու զրկիլ կրակ տալու, կամ թէ չէ շատ էլ որ քո հէրն ասէր, ես կը լսէի՞:

— Բաս ո՞նց էլաւ:

— Էս իրիկնապահին որ քնուիս ձիուցը վէր եկաւ, ինձ զրկեց Գիլակերենց դուքանի դուռը. գնա՛, ասեց, բազմութիւնն էտեղ հաւաքուած ա, քեզ համար մի քնջնում (սնիւն) կանգնի՛ր, ականջդ կախ արա՛, տես ո՞ւմ բերնիցն ի՛նչ ա դուս գալիս: Էս ու էն շատ պաի վայրահաչութիւն անէին քեռուս շուաքին, բայց մաշակար (չօշիւիւր) Համբօն՝ էն սուրբ Կարապետի ղէվը չը թողեց, աչքով ունքով խալխին հասկացրեց, որ ես էտեղ կանգնած եմ, նրանք էլ ցրուեցին, քուչէն դարտակուեց:

— Յետո՞յ:

— Ես էլ գնացի քեռուս յայտնեցի:

— Վնաս չունի, ասեց աղէն, ես էգուց ամենքի հէրն էլ կ'անի-ծեմ, դու մեր Խուղօյի տղի հետ պատրաստ կաց, մութը գետինն առաւ թէ չէ, Խուղօն ո՛ւր կը զրկի, ի՛նչ բանի կը դնի, տեղն ու տեղը կատարեցէք:

—Դէ՛, մնացածը գիտենք, հէրս նաւթը հանեց աղենց զէրուզամբիցը, մեզ տուեց ու շրկեց Գալ-ափունի մարագն ու գոմը կրակելու՝ մենք էլ արինք։

Խօսողներն էին Բալասան աղայի քրոջ որդի Վասակը և Խուդօյի տղայ Կարապետը։

ԺԵ.

СПАСИБО!

—Էգուց գլաջնու՝ սուղիէքանց բիբօր (շիրաւիւն) ա՛, ճաշից յետոյ տունը մի մարդ հաւաքուին Ձիթահանքի բակը, ինքը նաչալնիկն ա գալիս բիբօրի։ չեկողի մօրը կը լացացնեն, մի մանէթ շտրաֆ ունի, Օ. գիւղն ընկած՝ ձայն էր տալիս կապիւրես քաչալ գզիր Յականը։

Հարկաւոր չէր տուգանքի անունով երկիւղ տալ, տան գլուխ մէկը կար՝ գնաց, երկուսը կար՝ գնաց. մի մի լաւաշ հացի մէջ մի կտոր պանիր, կամ աղը դրած ձուկը փաթաթում էր ամեն ոք ու զրպանը կոխում, վազում դէպի Ձիթահանքը։

Ձիթահանք կոչուած տեղն Օ. գիւղումը չէր։

Մի փոքրիկ պարսկական գիւղի մօտ Օ. գիւղից ժամաչափ հեռաւորութեամբ գտնուում էր մի աւերակ։ Ոչինչ յիշատակարան կամ փորագրութիւն չէր նշմարուում աւերակի վերայ. միայն հիմքն և արեւելեան կողմում մի շարք սրբատաշ քարեր՝ ազատուել էին ժամանակի անողոք ճանկերից. իսկ միւս քարերը թէ ո՛ւր էին, հաստատ չէր կարելի ասել. ոմանք ենթադրում էին պարսիկ ռամիկների ձեռքով իւրեանց գոմերի յատակը սալալատակած. այլք հակառակն էին պնդում, ըստ որում պարսկական գիւղը շատ փոքր էր և շատ աղքատ. մի կամ երկու նիհար եգներ և հինգ վեց հատ հաւ էին նոցա անտեսութեան առարկայքը. պարսիկներից շատերը գոմ էլ չունէին, մի կիսագետնափոր, կիսախարխուլ խրճիթի մէջ մի անկիւնում եգն էին կապում, միւս կողմը մերկանդամ պարսկաձագերն էին կուշ գալիս իւրեանց բոկոտն ծնողների հետ, էլ ընչի՞ վերայ պէտք է գործ դնէին քարերը։

Աւերակն, ինչպէս երևում էր, մի փառաւոր անցեալ պէտք է ունենար. այդ աշկարայ էր շրջապատած մեծանիստ պարսպատեղի հետքերից։

Եթէ հաւատ չընծայենք պարսկական արեւելեան ճաշակով յերկրած աւանդութիւններին, ապա աւերակը հայկական սրբարաններից մէկի մնացորդն էր անշուշտ: Տեղական պարսիկների շուայլ երեւակայութեամբ, այն հնութիւնն իւրեանց նախկին տիրապետող իշխանի ապարանքն էր. նրա մօտի ապառաժ քարի ճեղքուած քից դուրս բղխած առատահոս և ականակիտ աղբիւրը տափասէր իշխանի մարմարեայ շատրուանին ջուր է մատակարարել. նրա փղոսկրից ճերմակ հոլանի կանանց և հուրի-փարի հարճերի նրբակազմ ու լուսափայլ մարմինները զովացնող ու թաւշային փափկութիւն տուողն է հանդիսացել: Իսկ հասուն և խոհական դատողութեամբ՝ աղբիւրը սրբավայրի ջերմեռանդ միաբանական եղբայրութեան միակ ըմպելիքն է եղել, նոցա անդերն ու մարգաստաններն է ջրել, նոցա ջրադացներն է պտըտել և հետզհետէ իւր մէջ առնելով ներքեւներում բղխած մեծ ու փանր աղբրակները՝ մի գետակ է կազմել:

Աւերակի շրջակայքն այսօր յառաջուանից տարբեր մի այլ պատկեր է ներկայացնում. գիւղի ներկայ տիրապետող քաղցած պարսիկ բէգի պարտէզն է կոչուում դա, որ ըստ ինքեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ սաղարթաշատ ուռենիների երկու շարք, որոց հովանու ներքեւ, փափուկ սէգի վերայ, արժէ ամառները սրտակից և սիրելի բարեկամների հետ պարարտ գառան տժտժան խորովածներ վայելել՝ վրէն էլ դատարկել Օ. գիւղի հեշտախում և զուարթացուցիչ գինին՝ անշուշտ բարեխառնած աղբիւրի քաղցրահամ և սառը ջրով:

Այդպէս էլ անում են. ամառուան շոքին՝ կիւրակի օրերը՝ միշտ կը լսես ծառերի տակից մերձակայ գիւղօրէից կտրիճների երգերի ելեւէջները:

Այստեղ էր կարգադրել նաչալնիկն Օ. գիւղի տանուտէրի ընտրելատեղին, ոչ թէ զրաւուած տեղի հրապուրանքներից՝ այլ դիտմամբ ընտրութիւնը գիւղից հեռու կատարելու նպատակաւ. ըստ իւր ասութեան՝ որպէս զի անգործ հետաքրքիրների խառնաշփոթ խանգարմունքն արգելք չը դառնայ գործի շարունակութեանը:

Բազմափորձ գաւառապետի բազմամեայ պաշտօնավարութեան գործնական կողմն էր այս:

Բազմութիւնը շատ մեծ է, Օ. գիւղն էլ մեծ է. մեծ «տունը մեծ ընտանիք կունենայ»:

Անհրաժեշտ է ասել, որ աւերակի հարաւ-արեւելեան անկիւ-

նում մի երկու սևացած քարեր միմեանց թիկնած՝ կազմել են տակը մի պատուհանաձև խորշ. անձրեն ու արևը չեն ծեծում այդ խռուրդ, ուրեմն չէին էլ կարող ի հնումն հանգցնել այն ձիթածրագները, որոնք յաճախ վառուում են եղել ջերմեռանդ հայ և թուրք ուխտաւորներից. գերչակի ձիթի թանձր ծուխը մրտուել, սևացրել է ամբողջ խորշը և նրա մէջ ընկած ձիթաշաղախ քարը, որին հայերը Զիթահանքի քար են ասել, իսկ պարսիկներն՝ օջաղ, որին հայերը մի նշանաւոր բաղմավաստակ հայ գործողի գերեզման են անուանել, իսկ պարսիկներն՝ Իսլամի հաւատարիմ աւանդապահի դամբարան: Այս է եղել՝ թէ ա՛յն, ո՞րն էր ուղիղ՝ մենք կարեւորութիւն չունինք խորագննին գտնուելու. փաստ է, որ այդ տեղը վաղ ժամանակ միապէս յարգուած է եղել երկու ալլակրօն դրացիներից: Այսօր եղածների հետքերն էլ չքանում են:

Ահա եկել է գաւառապետը. նա կանգնած է աւերակի բաշի վերայ, նրա տեղը բարձր է ամենքից, նա նմանում է այսօր մի թխտի, որի ձագերը համեմատաբար շատ փոքր են իրանից:

Գաւառապետը ձեռքը բարձրացրեց:

Ընդհանուր և մեռելայ լուռութիւն:

Բոլորեցունց գլուխները բաց են. երեք պաշտօնական գլխարկ միայն հանգիստ նստած են իւրեանց տեղը. երեք ճակատ միայն փայլում է երեկոյեան պահու կարմիր արևից ցոլացող ճառագայթներից. մետաղեայ աստղը պսպղում է երեք հոգու ճակատին. նոցանից մինը գաւառապետն է, միւսն իւր ատենադպրի օգնականը և երրորդը՝ մեզ քաջածանօթ Վլադիմիր Նեստորիչ Մելնիկովը:

Շատ ժամանակ չէ վերջինիս գալուտը. նա գաւառապետից յետոյ՝ իւր սանձակոտոր նժուգը հեծած՝ սիգապանծ մտրակելով եկաւ, իջաւ, ձին տուեց վաղուց իրեն սպասող Խուդօյին և մօտեցաւ սեղմեց քաղցրաժպիտ դէմքով գաւառապետի ձեռքը:

Տհաճութեան կնճիռները խորշովեցրին գաւառապետի ճակատը. բազմութիւնը հաճութեամբ նկատեց այս և ուրախացաւ. ոչ ոքից ծածուկ չը մնաց, որ սրտանց էր գաւառապետի սառը վարմունքը Բալասան աղայի հետ:

— Հրամայեցէ՛ք, Վլադիմիր Նեստորիչ, փնթփնթաց նա և ձեռքով իւր ձախակողմեան քարը ցոյց տուեց նստելու:

Մի թեթեւ և թուուցիկ հայեացք բաւական էր գաւառապետի համար ապահով լինել, որ իւր սիրելի ժողովուրդը չէր երկմտում իւր վերայ եկած անախորժ տրամադրութեան ստուգութեան մասին:

Եթէ գաւառապետն իւր բազմամեայ փորձառութիւնով և բարակ խելքովն ուսումնասիրել է իւր կառավարած գաւառի մեծ ու պատկին, շատերին յականէ յանուանէ ճանաչում է, ժողովուրդն էլ կշռել ու չափել է իւր սիրած նաչալնիկի ամեն մի շարժումը:

— Գտանքդ դէք գլխներդ, սիրելի՛ք, առաջին հրամանը դուրս եկաւ գաւառապետի բերանից:

Հրամանը կատարուեց:

— Ձորս հինգ ամիս է, ես ձեր մէջ չեմ եղել, սկսեց բարձր և հաստ ձայնով նաչալնիկը, և ինչպէս տեսնում էք՝ տանուտէրի ընտրութիւնն այսօր թուրքի գիւղում եմ կատարում: Դուք, ի հա՛րկէ, պատճառը չը գիտէք, բայց ես ձեզանից խոսով եմ: Այս վերջին տարին՝ մեր անշնորհք տանուտէր Կարապետի յիմարութիւնից՝ ձեր գիւղը միանգամայն Աստուծոյ երեսից ընկել է. օր չի անցկենում, որ մի խայտառակ դէպք չը պատահի. մարագ կրակել, հնձան ալրել, այգի կտրատել, արտ կրակ տալ, իրար գլուխ ճղել, վերջապէս սպանութիւն՝ միմեանց վերայ կարգում ես տանուտէրի յայտարարութեան մէջ, կարգում ես ու շփոթուած մնում. ի՞նչ դարձան այս մարդիկը, մտածում ես՝ կարծե՛ս, սրանք Օ. գիւղացիք չեն: Մի ժամանակ սրանք ոչ միայն մեր գաւառի՝ բոլոր Արարատեան աշխարհի օրինակն էին, ամենքից հարուստ էին, հացով, քաղաքավարութիւնով, լեզուով աշխարհքի բերանն էին փակել, այսօր ընդհակառակն ամեն տնաքանդութիւն ձեր մէջիցն է դուրս գալիս. քառասուն տարի է ես պօլիցիական ծառայութեան մէջ եմ, կեանքիս մեծ մասը ձեր գաւառումն եմ անց կացրել, հայր ու որդու նման ձեզ հետ աղ ու հացկեր եմ դարձել և այսքան անպիտանութիւն՝ ինչպէս այս վերջին երկու երեք տարուան եմ ձեր գիւղիցը տեսնում, միտքս չեմ բերում. ո՞վ էր լսած ու տեսած Օ. գիւղացուն բանտ նստած, շղթայակալ բերդը տարուած. բայց այսօր քանի՞սը կան: Սո՛ւտ եմ ասում:

— Աստուած պատճառի տունը քանդի՛, որդիքը կոտորի՛, աղայ ջա՛ն, կոտրած դրգալի պէս մէջ մտաւ Մելիք-Բաղալը. ո՞վ մեր գեղի հալալը հարամեց, ո՞վ մեր դառը քրտնքով աշխատած տխմորի-

(Խմոր) մէջ արիւն խառնեց, ցեց դառաւ մեր քիսէն (գոտի) մտաւ, գեղն իրար քցեց, մեր գառան պէս խոնարհ ջահէլներին օձեր շինեց, մեր բզեւը (պարանոց) փաթաթեց, նրա տունը հրեղէն սուրբ մտնի՛, էս Զիթահանքի օջաղը նրան գունդ ու կծիկ ածի՛ (Խեղալանէլ), հաւի պէս թռչաւ տալանի՛, էստեղ վէր քցի՛: Դու, աղայ ջա՛ն, ասա՛ ամէ՛ն:

—Է՛հ, ձէնդ կտրի՛, Մելիք-Բաղա՛լ, քեզ անէծքը չի սաղում, քոնը խամ խամ ուշուցներն են, որ եթէ բերանիցդ հանել ես, լեզուդ կը ծակեմ, պարան կ'անցկացնեմ ու էս ծառիցը կախ կ'անեմ, կատակի տուեց գաւառապետը:

—Ձէ՛, աղայ՛, չէ՛, գլխիդ մեռնեմ, Աստծով կը տեսնի էս խալխը իր արիւնը ծծողին իր աչքի առաջին բղղալով (Բառապետ) գետինը դիպչելուս: Էն սուրբ Լուսաւորչի լոյս հաւատիցն եմ խնդրել, որ քեզ է՛լ, էս էրուած ու խորովուած հասարակութիւնին է՛լ, ինձ էս գերեզմանի դուռը հասած անբեղ անմիրուք հալիւորին է՛լ արժանի անի բաց աչքով էն օրը տեսնելու:

—Է՛հ, ծերացել ես, խելքդ յետ է տուել, Մելի՛ք, ձէնդ կտրի՛, թող խօսիմ, չաչանակի (չապարան) պէս բերանիս մի՛ դալ:

—Խօսի՛, աղայ ջա՛ն, հրամանք արա՛, դու էլ գիտես, թէ քամին ո՞ր կողմիցն ա փչում:

—Ի՛նչ էք շանն իրաւունք տալիս հաչալու, կամաց հրելով գաւառապետին՝ փսփսաց ուսերէն Բալասան աղան:

Գաւառապետը չը լսել պատրուակեց, բայց դէմքից երևեցաւ, որ ներսն արիւնն եփ եկաւ:

—Ինչ է իցէ, Օ. գիւղի հասարակութիւն, նորից շարունակեց գաւառապետը, ես ձեզ ժողովել եմ այս սրբատեղի մօտ՝ լայն ու ազատ դաշտում տանուտէր ընտրելու: Ահա քուէտուփը դրած է ճիշդ ուխտատեղի մօտ. այս գիտութեամբ է արած. դուք պէտք է հիմի մօտենաք տփին. թո՛ղ մօտ գնացողը յառաջ համբուրի սևացած քարը՝ յետոյ քուէն ձեռք առնի: Ես իրաւունք եմ տալիս ձեզ երեք հոգու քուէարկել՝ ում որ դուք ցանկանում էք. ով որ, ի հարկէ, օրէնքի զօրութեամբ ընտրուելու իրաւունքից զրկուած չի լինիլ. ում սպիտակ քուէները շատ կը լինի, նա կը լինի ձեր տանուտէրը: Աստուած կը սիրէք, սիրելի՛ք, ընտրեցէ՛ք մի օրինաւոր մարդ, որ ձեր ցաւերին դարման տանի:

—Ողջ 0. գիւղի հասարակութիւնն, աղայ ջա՛ն, իմ ձեռովս էս
թուղթը քեզ ա տալիս:

—Էդ ի՞նչ թուղթ է, Մելիք-Բաղա՛լ:

—Էս էն թուղթն ա, նաչալնիկն ապրած կենա՛յ, որ մենք տա-
նուտէր ենք ուզում էն մարդին, որից, թէ միտդ ա՛ քեզ ձորումը
ձուկն ուտելուս զանգատ էի անում, որ իմ ջիբի կապէկները կորեց
շտրաֆ առնելով, որ իմ բլբուլի լիզուն ծափն էր կոխել, որ ուզում
էր մեր գեղի վրից ուշուէն ցնատու անումը վերացնի, որ մեր մէջը
կարգ ու կանոն մտցրեց, որ...

—Դէ լա՛ւ, Մելի՛ք, խուլ չենք, հասկացանք, դուք ուզում էք
Արտեմ Սէրգէյիչին. ես է՛լ շատ ուրախ կը լինէի, բայց նախ՝ կարծե՛մ,
նա չի համաձայնիլ իւր պաշտօնը թողնել և երկրորդ՝ թո՛ղ՝ ձեր փո-
խարէն քուէն խօսի:

—Գլխիդ մեռնի՛մ, մեր ցաւը մեզ էլ յայտնի ա՛, քեզ է՛լ, քար
մի՛ քցիլ տալ, վա՛յ թէ տակիցը Մօլլա Նասրադինի եղի պուլկի պէս
շօռ դուս դայ:

—0. Գիւղի հասարակութիւն, ձայն տուեց զաւառապետը,
ցանկանո՛ւմ էք միաձայն ընտրութիւն, այս թուղթը ձեր գրա՞ծն է:

—Ցանկանում ե՛նք, ցանկանում ե՛նք, ոտիդ զուրբա՛ն, նաչալ-
նի՛կ, թուղթն էլ մեր բերանն ա:

—Աղայ ջա՛ն, յառաջ եկաւ ամբոխի միջից Բալասան աղայի
քրոջ որդի Վասակը, թո՛ղ էս թուղթն է՛լ խօսի:

Գաւառապետը բաց արաւ երկու հանրագրութիւնները. առա-
ջինն Արտեմ Սէրգէյիչի մասին էր՝ երկրորդը Խուզօյի օգտին: Գաւա-
ռապետը մնացել էր մոլորուած, ուսերի բարձրանալու հետ դէմքի
վերայ տարակուսանքն էր արտափայլում:

—Ամօ՛թ ձեզ, 0. գիւղացի՛ք, զգուանքով արտասանեց նա
վերջապէս, այսչափ էլ մի հասարակութիւն իրեն ստորացնի՞, մի
մարդ երկու տեղ ստորագրի՞: Դու սրանով ես խօսում, Մելիք-Բաղա՛լ:
Գաւառապետն սկսաւ կարդալ երկու թերթի վերայ միաժամա-
նակ ստորագրողների անունները:

Մի քանիսն, արդարեւ ամօթահար սևացան ու լռեցին. նոցա
ձեռքերը կեղծ չէին. բայց մեծամասնութիւնը բարձրաձայն աղա-
ղակեց.

—Գլխիդ մեռնե՛նք, նաչալնի՛կ, մենք մենակ Գոմշակերենց Արտուրի թղթիցն ենք տեղեակ, մենք ուրիշ տեղ ձեռք չունինք։

—Այս խնդիրներն ո՛վ է գրել, տանուտէ՛ր, հրամայեց զաւառապետը։

—Առաջինն իմ գրածն ա, մօտ եկաւ ամբոխի միջից Սիսակը։

—Երկրորդը։

Ո՛չ մի ձայն։

—Այստե՛ղ արի, ա՛յ տղայ, կանչեց զաւառապետը Վասակին, այս գիրն ո՛ւմ գրածն է։

—Երեւան ենք գրել տուել, յանդգնաբար պատասխանեց Վասակը։

—Սո՛ւտ ես ասում։

—Սուտ չեմ ասում, ես ինքս եմ տարել մի աղայ մարդի հինգ մանէթով գրել տուել։

—Ո՞վ է գրել, շեշտեց զաւառապետը բարձր և թնդածայն։

—Ինձ տուէ՛ք՝ տեսեմ, նաչալնի՛կ, յառաջ եկաւ Սիսակը և ձեռքիցն առաւ։

—Առէ՛ք, յետ տուեց նա թուղթը, ես գրողին քաջ ճանաչում եմ, բայց հաստատել դժուար է. զողն ինչքան կամեցել է թագցնել իւր զողացած աքաղաղը, բայց պո՛չը դուրսն է մնացել, Տաճկաստանի ոլոր մոլոր գրուածքներն երևում են։

—Կը խնդրեմ յարգուաբար Ձերին գերագնուութենէն՝ հրաման ընէք արձանագրութիւն կազմել. պարոն Սիսակ մեզի կ'ակնարկէ, մենք պատիւ կը պահանջենք՝ օրինաց որոշեալ յօդուածոց հիմանց ասպաւինած։

Ժողովրդի միջից մի ընդհանուր քրքիջ և դառն տհաճութիւն դուրս թռաւ գրագիր Վանեցու բողոքին պատասխան։

Սա պաշտօն ունէր այստեղ, ձեռքին բռնած ժողովրդագրական ցուցակը՝ սպասում էր անունները կարդալու։

—Իրաւունքս պաշտպանել կը խնդրեմ, Տէ՛ր, Հայրիկին ձեռերն ամեն նախատինք կը տանին, բայց պատուոյ խնդիր կենսական է իւրեանց համար։

—Լա՛ւ, լա՛ւ, այդ վերջին բանն է, արհամարհական հայեացքով պատասխանեց զաւառապետը Վանեցուն և վճռեց.— ո՛չ մի թուղթ չեմ ընդունում, քուէտուփը թող խօսի։

—Որ էդպէս ա, նաչալնի՛կ, ասաց Մելիք-Բաղալը, թո՛ղ քար քցողների անումները Վանեցին չը կարդայ։

Գաւառապետի հրամանաւ իւր քարտուղարը կարդաց:

Քուէի դրուեցաւ նախ՝ Արտեմ Սէրգէյիչը:

Քուէներն Օ. գիւղի հաստարուն ընկուզներին երի պտուղներն էին:

Ամենքից յառաջ քուէտուփին մօտեցաւ Մելիք-Բաղալը:

— Օ. գիւղի հասարակութիւն, գոյեց նա, էն ա՛ ժամէ ժամքը մօտ ա, օրը միթնում ա, բայց թո՛ղ իմ պօպօքն (խուէն) արևի պէս լոյս տայ: Աստուած է՛լ, բանդէն է՛լ (հալոյ) Արտօյին է ցանկանում. է՛ս էլ իմ սիպտակ քարը:

Հասարակութիւնն ուրախ էր, Արտեմ Սէրգէյիչի քուէտուփը լցուեց. բացի Խուղօյից, Դարբենեց Մատօյից, Փոշմանենց Սարօյից և սուդիա Դաւթից՝ բոլորն սպիտակ քուէ տուին:

Վերջիններս Բալասան աղայի անցեալ գիշերուան խորհրդակիցներն էին. սրանք էլ, դիցո՛ւք, չէին ցանկանում Խուղօյի տանուտէրութիւնը, բայց ահա վեր էր՝ քան մահը, հոգեհաններն այնտեղ նստած էր և մի առ մի դիտում էր ամենքի ձեռքի շարժումները. ուստի ստիպուեցան սևանալ հասարակութեան յառաջ՝ քան թէ Բալասան աղայի և սև քուէ տուին:

Մեղադրելի չէր:

Մի դէպք միայն անհասկանալի մնաց ամենքի համար:

Օրէնքով քուէտուփի երեսը պէտք է վարագուրած լինէր: Մոռացա՞ւ արդեօք գաւառապետն այս կէտը, չենք կարող ասել, առայժմ դեռ մեզ համար այդ արկածքն Աղամայ մութն է: Խօսքս այն անթափանցիկ աղջամղջի մասին է, որ մեր Աղամ պապին յուսահատութեան մէջ ձգեց:

— Դէ՛, հասարակութիւն, էլ ո՛ւմ էք ուզում քար ձգել, ձայն տուեց գաւառապետը:

— Դու տեսար, աղայ ջա՛ն, որ բացի մի քանի ցածահոգի, որ լպստողներից ողջ գիւղն Արտօյին ա կամենում, էլ ո՛ւր ես քեզ զլխացաւանք տալիս, յառաջ եկաւ Մելիք-Բաղալը:

— Օրէնքն է հրամայում:

Քուէարկուեցաւ և նախկին կանդիդատ Սարօն, բայց սակաւ քուէ ստացաւ:

Մութն արդէն գետինն առնում էր:

— Շո՛ւտ արէք, իմ ճանապարհն էլ է հեռու, ձե՛րն էլ, ձայն տուեց գաւառապետը. ո՛ւմ էք ուզում քուէարկել:

—Խուղօյի՛ն, գոչեց միայն Վասակը:

—Ո՛չ, նաչալնի՛կ: Ի՛նչ, կանչեց Մեկիքը: Նրա հետ ձայն տուին մի քանիսն էլ՝ բայց ձայնը փոխած քուռջ ու պուճախից:

Խեղճերը ճշմարտութիւնն ասելը վախենում էին, Բալասան աղէն իւրեանց կորկոտը կ'եփէր:

—Ո՞ւմ էք քար քցում:

—Խուղօյի՛ն, դարձեալ լսուեցաւ Վասակի ինքնավստահ ձայնը:

—Խուղօյի՛ն՝ հօ՛ Խուղօյին, հրամայեց նաչալնիկը և ընկոյզները նորից բաժանուեցան:

Մուլթն արդէն գետինն առաւ. սարերի դազաթները սեւապատուել էին, միայն Մասիսն էր իւր արեւմտեան աչտով աննշմար ժպտում, մարդիկը հազիւ ճանաչում էին իրար, մինչև թուրքի սոված աղաչի տանից ձիթի ճրագը կը բերէին, քուէտուփը լցուելու վերայ էր:

—Էլ մարդ մնա՞ց քուէ տալու, եկէ՛ք, հրամայեց գաւառապետը:

—Քանի՞ ձէն տաս, աղայ ջա՛ն, ես իմ աչքովս տեսայ, թէ ընչե՞ր անցկացան, հէնց մարդ կար՝ երեք չորս հետ էր տփին մօտ գալիս, ջիբիցը բուռը բուռը հանում էր պօպօքներն ու լցնում, արդ արաւ Մեկիքը:

—Թէ որ շատ էք նեղանում, Օ. գիւղացի՛ք, ձայնը բարձրացրեց գաւառապետը, եկէք ինձ լսեցէք. էլ Խուղօյի քարերը չը համարենք, Արտեմ Սէրգէյի՛ն գրենք տանուտէր՝ Խուղօյին կանդիդատ:

—Ինձ թէև խօսք չի հասնիլ, ասաց Բալասան աղան, բայց իմ կարծեօք պ. նաչալնիկը շատ խելօք է դատում, Նեսիօս մեռնի թէ սուտ եմ ասում, թող Արտեմ Սէրգէյի՛չը լինի տանուտէր՝ Խուղօն կանդիդատ. գլուխը քարն ա տուել Խուղօն, աչքն ինչքան բարձրանայ՝ ունքից վերև չի բարձրանալ, երկուսն էլ իմ բարեկամներն են, բայց Խուղօն Արտեմին չի հասնիլ:

Մեկիք-Բաղալը լլկուեց, ձայն չը հանեց, բայց բոլորեքեան համաձայնեցին:

Գաւառապետի հրամանաւ ճրագի լուսով տանուտէր գրուեցաւ Արտեմ Սէրգէյի՛չը և նրան կանդիդատ՝ Խուղօն:

—Ի՛նչ կասէք, տղէ՛ք, սուղիէքանց ընտրութիւնը յետ թողնե՞մ, թէ միաձայն ընտրութիւն անենք:

—Միաձայն, միաձայն:

—Ո՞ւր էք կամենում:

—Թողէ՛ք՝ է՛ս անդամ էլ ես խօսեմ, կրկին միջամտեց Մելնիկովը, եթէ Մելիք-Բաղալին իր հասակն արգելք չը լինէր, ես ոչ ոքի իրաւունք չէի տալ նրանից յառաջ ընկնիլ, բայց ըստ որում դրան հիմի հանգստութիւն է պէտք, ես լաւ եմ համարում առաջարկել Մատոյին, Սարոյին և Դաւթին: Լաւ չեմ ասո՞ւմ, Մելիք-Բաղալ:

—Շատ լաւ ես ասում, Բալասան աղայ, թուրքն ասում ա՛հ Տընկերը Տընկերին թէ չը գտնի, աշխարհքս ախ ու վախով անց կը կենայ. ես էս օրուանից հոտն առնում եմ, ես լաւ գիտեմ, թէ տա՛նուտէն ո՛վ պտի ընի, խեղճ իմ Արոս՝, մեր ձեռովը քո տունը քանդեցինք, բայց հո՛գ չի, վերեն Աստուած կայ. մնա՛ս չունի՝ թող սուղիէքն էլ ընին Սարօն, Մատօն ու Դաւիթը:

—Համաձայն էք, հասարակութիւն, կրկնեց գաւառապետը:

Մի քանի ձայներ միայն խուլ արձագանք տուին Վասակին, ընդհանրութիւնը լուռ էին:

—Լուրթիւնը համաձայնութեան նշան է, վճռեց նաչալնիկը և քարտուղարը ձայն տուեց.

—Ընտրուեցան Օ. գիւղի համար հասարակութեան ստարշինա կամ տանուտէր՝ Արտեմ Սէրգէյիչ Դոմշակերով, նրան կանգիդատ՝ Խուդա՛վէրդի Դուքանէրուածով, իսկ սեյսկի սուղիէք կամ գիւղական դատաւորներ՝ Մարտիրոս Դարբինով, Սարիբէգ Փոշիմանով և Դաւիթ Կաշեպոզով:

—Կճուճը գլորուեց, խուփը գտաւ, ասաց Մելիք-Բաղալն ու գլուխը դարձրեց դէպի Օ. գիւղը:

Ամենքը տրտունջներ արձակելով՝ քարշ էին գալիս յուսակտուր և խաւարի մէջ այս ու այն քարին դիպչում, գնում էին և օրհնում պատճառի եօթը պորտը:

Ամենքից վերջը ձիաւորուեցան գաւառապետն իւր մարդիկներով և Մելնիկովը:

—Спасибо! (շնորհակալութիւն), սեղմեց Բալասան աղէն այս խօսքով գաւառապետի ձեռքը:

Վերջինս չը պատասխանեց. նա յուզուած էր: Գաւառապետը մտրակեց իւր ձիուն և աջ գնաց՝ դէպի իւր կենդրոնատեղին, իսկ Մելնիկովը՝ դէպի ձախ՝ Օ. գիւղը:

(Կը շարունակւի)